990
04.03.2015

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27 –Ի ՆԻՍՏՈՒՄ
ԸՆԴՈՒՆՎԱԾ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2015թ. N 1-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 27-ի նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը*.

1.1. Ջերմուկի համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

զեկ. Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկի համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործման մասին.

զեկ. Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3.Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 30-ի N 51-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին

զեկ. Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.4. Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 31-ի N 40-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա.Գառնիկյան

1.5. Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Վարդանյան փողոցի N 1/1 հասցեում գտնվող տարածքը մրցույթով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական վարձավճարի գինը և պայմանները հաստատելու և Ջերմուկի համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 31-ի N 28-Ա և 2013 թվականի մայիսի 30-ի N 24-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին.

զեկ. Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող արհեստական լճակները մրցույթով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի գինը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. Ջերմուկի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.7. «Ջերմուկ քաղաքի շրջակա միջավայրի իրավիճակի վերլուծություն. գործողությունների ծրագիր» տեղական բնապահպանական գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին.
զեկ. Ջերմուկի համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա		
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...6..... դեմ-....0..... ձեռնպահ- ...0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 փետրվարի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2015թ. N 2-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքի 2014 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա		
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....6..... դեմ-....0..... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 փետրվարի 27
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի համայնքի ավագանու
2015թ փետրվարի 27-ի N 2-Ա որոշման

<< Վայոց ձոր մարզի
Ջերմուկի քաղաքային համայնքի
2014 թվականի
տարեկան բյուջեի կատարողականը

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

30.12.2014թ.

N		Եկամուտների անվանումը	Տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան (12 ամիս)			
			պլան	պլան	Փաստ	կատար. %	կատար. %
ԽՄԻՄԲԸ	ԲԱԺԱՆՄԱՆԸ		հազ.դրամ			12 ամիսների նկատմամբ	տարեկան պլանի նկատ.
I		**Վարչական բյուջե ընդամենը**	199222,2	199222,2	192101,5	96,4	96,4
1		***Ընդամենը հարկային եկամուտներ***	*41619,8*	*41619,8*	*45840,0*	110,1	110,1
	1,1	Հողի հարկ	11278,1	11278,1	12967,4	115,0	115,0
	1,2	Գույքահարկ	30341,7	30341,7	32872,6	108,3	108,3
	1,6	Հողի հարկի և գույքահարկի տույժ և տուգանք					
2		*Ընդամենը տեղական տուրքեր (թույտվության համար)*	*7142,8*	*7142,8*	*5952,8*	83,3	83,3
	2,1	Նոր կառուցվող օբյեկտների շինարարություն	6,0	6,0	*120,0*	0,0	2000,0
	2,2	Օբյեկտները վերակառուցելու, տեսքը փոփ. աշխատանքներ	266,0	266,0	*215,0*	80,8	80,8
	2,3	Օբյեկտները քանդելու աշխատանքներ	10,0	10,0	*10,0*	100,0	100,0
	2,4	Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառք	2277,5	2277,5	1846,3	81,1	81,1
	ա	հիմնական շինությունների ներսում	2277,5	2277,5	1846,3	81,1	81,1
	բ	ոչ հիմնական շինությունների ներսում					
	2,5	Բացօթյա վաճառք կազմակերպելու	311,5	311,5	340,0	109,1	109,1
	ա	Գազ և վառելիքաքսայուղային նյութեր	280,0	280,0	200,0	71,4	71,4
	բ	գյուղմթերքներ, յուրաքանչյուր օրվա համար	31,5	31,5	140,0	444,4	444,4
	գ	այլ ապրանքներ (այդ թվում՝ ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանք)					
	2,6	ժամը 24.00 ից հետո աշխատելու	550,0	550,0	50,0	9,1	9,1
	ա	խաղատներ					
	բ	շահումներով խաղերի կազմակերպման օբյեկտներ					
	գ	բաղնիքներ (սաունաներ)					
	դ	հանրային սենյակ և զվարճանքի օբյեկտներ	550,0	550,0	50,0	9,1	9,1
	2,7	Արտաքին գովազդ տեղադրելու	2346,8	2346,8	2476,5	105,5	105,5
	ա	ծխախոտի արտադրանք գովազդող					
	բ	այլ արտաքին գովազդ	2346,8	2346,8	2476,5	105,5	105,5
	2,8	Օրենքով սահմանված այլ տեղական տուրքեր	1375,0	1375,0	*895,0*	65,1	65,1
3		***<< օրենսդրությամբ սահմանված պետական տուրք***	*500,0*	*500,0*	*394,0*	78,8	78,8
4		***Ոչ հարկային եկամուտներ***	*78791,5*	*78791,5*	*68746,6*	87,3	87,3
	4,1	Համայնքի սեփ.հանդիսացող հողերի վարձակալության վարձավճար.	5122,0	5122,0	3282,4	64,1	64,1
	4,2	Գյուղատնտեսական հողերի վարձակալության վարձավճարներ	2518,0	2518,0	5039,0	200,1	200,1
	4,3	Տեղական ինքնակառավարման մարմինների գույքի վարձակալութ.					
	4,4	Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից					
	4,5	Տեղական վճարներ	1500,0	1500,0	1581,4	105,4	105,4
	4,6	Պետական բյուջեից պատվիրակված լիազորությունների համար հատկացումներ	12513,1	12513,1	12513,1	100,0	100,0
	4,7	Այլ ոչ հարկային եկամուտներ	57138,4	57138,4	46330,7	81,1	81,1
5		***Պաշտոնական տրանսֆերտներ՝ հատկացումներ***	*71054,6*	*71054,6*	*71054,6*	100,0	100,0
	5,1	Պետական բյուջեից դոտացիա	55106,8	55106,8	55106,8	100,0	100,0
	5,2	Այլ աղբյուրներից դոտացիաներ	14757,4	14757,4	14757,4	100,0	100,0
	5,3	ՊՖ տրամադրվող նպատակային սուբվենցիա	1190,4	1190,4	1190,4	100,0	100,0
		Տարեսկզբի ազատ մնացորդ	*113,5*	*113,5*	*113,5*	100,0	100,0
II		**Ֆոնդային բյուջե**	25000,0	25000,0	19776,0	79,1	79,1
	1,1	այլ աղբյուրներից կապիտալ տրանսֆերտ					
	1,2	Համայնքի սեփականությունը համարվող գույքի օտարումից	24797,3	24797,3	19573,3	78,9	78,9
	1,3	Վարչական բյուջեից (պահուստային ֆոնդից) կատարվող հատկացումներ					
		Տարեսկզբի ազատ մնացորդ	202,7	202,7	202,7	100,0	100,0
		Ընդամենը եկամուտներ /I+II/	*224222,2*	*224222,2*	*211877,5*	94,5	94,5

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

N		Ծախսերի անվանումը	Տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան (9 ամիս)			
			պլան	պլան	Փաստ		
ԽՄԲԱԿՈՏ	ԵՆԹԱԽՄԲԱԿՈՏ		հազ.դրամ			ժառանգությունների % դրությամբ	կատարման % դրությամբ ըստ վերջին կանխիկ
I		*Վարչական բյուջե ընդամենը*	*199222,2*	*199222,2*	*191100,1*	*95,9*	*95,9*
1		Տեղական ինքնակառավարում	43500,9	43500,9	41531,4	*95,5*	*95,5*
2		Պետ. Բյուջ.ՏԻՄ պատվիրակված լիազոր.	14541,2	14541,2	14541,2	*100,0*	*100,0*
3		Կրթություն և գիտություն	24600,0	24600,0	23235,0	*94,5*	*94,5*
4		Առողջապահություն					
5		Սոցիալական ապահովություն և ապահովագրություն					
6		Մշակույթ, սպորտ և կրոն	72589,4	72589,4	70187,5	*96,7*	*96,7*
7		Բնակկոմունալ տնտեսություն	39313,7	39313,7	37130,0	*94,4*	*94,4*
	7,1	Ճանապարհների վերանորոգում					
	7,2	Սան մաքրում	39313,7	39313,7	37130,0	*94,4*	*94,4*
	7,3	Կանաչապատում					
	7,4	Արտաքին լուսավորություն					
	7,5	Հարազատներ չունեցող մարդկանց թաղում					
	7,6	Գրային կառույցների շահագործում					
	7,7	Այլ ծախսեր					
8		Վառելիքաէներգետիկ համակարգ					
9		Գյուղատնտեսություն					
10		Անտառային, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն					
11		Լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ					
12		Պահուստային ֆոնդ	0,0	0,0	0,0		
13		Այլ ծախսեր	4677,0	4677,0	4475,0	*95,7*	*95,7*
II		Ֆոնդային բյուջե	25000,0	25000,0	19774,6	*79,1*	*79,1*
1		Կապիտալ շինարարություն	2242,0	2242,0	1242,0	*55,4*	*55,4*
2		Կապիտալ վերանորոգում	10908,0	10908,0	10050,1	*92,1*	*92,1*
3		գեոդեզիական -քարտեզագրական ծախսեր	1000,0	1000,0	700,0	*70,0*	*70,0*
4		Պահուստների ձևավորում	10850,0	10850,0	7782,5	*71,7*	*71,7*
		Ընդամենը ծախսեր	*224222,2*	*224222,2*	*210874,7*	*94,0*	*94,0*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ.Տ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2015թ. N 3-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի բյուջեի վարչական մասի 2015 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի 1001365.0 ՀՀ դրամ գումարն ուղղել նախորդ բյուջետային տարում բյուջեի վարչական մասից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների կատարմանը և ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 1461.3 ՀՀ դրամն ուղղել կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա		
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- 6 դեմ- 0 ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 փետրվարի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2015թ. N 4-Ն

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի արվեստի դպրոցներում ուսման վարձերի և նախադպրոցական ու մարզական հիմնարկներում ծնողական վճարների 2015 թվականի ամսական դրույքաչափերը և համայնքի ճոպանուղու կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարի չափը սահմանելու մասին» N 51-Ն որոշման 5-րդ կետը լրացնել նոր՝ «Ամառային սեզոնի հետ կապված հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին գանձվող վճարի չափը սահմանել 1500 դրամ՝ մեկ ուղևորի մեկ պտույտի հաշվով», նախադասությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա		
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- 6..... դեմ-.....0..... ձեռնպահ-0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 փետրվարի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2015թ. N 5-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի N 40-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի հոկտեմբերի 31-ի «Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող հողամասը օտարելու համաձայնություն տալու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին» N 40-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը. որոշման 1-ին կետում «խաղահրապարակ և հանգստի գոտու կառուցման» բառերը փոխարինել « բնակելի կառուցապատման» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....6..... դեմ-....0..... ձեռնպահ- ....0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 փետրվարի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2015թ. N 6-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 28-Ա ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 24-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի հիման վրա ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. համաձայնվել Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Վարդանյան փողոցի N 1/1 հասցեում գտնվող 101 քմ մակերեսով (կադաստրային ծածկագիրը՝ 10-002-014-001-002-001, նպատակային նշանակությունը՝ հասարակական) տարածքը մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով տարածքի՝ վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ հասարակական գործունեություն ծավալելու համար, ամսական վարձավճարի մեկնարկային գինը՝ 20000 դրամ, վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 տարի:

2.«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» կետի հիման վրա ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 31-ի «Ջերմուկի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Վարդանյան փողոցի N 1/1 հասցեում գտնվող տարածքը աճուրդով օտարելու համաձայնություն տալու, մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին» N 28-Ա և 2013 թվականի մայիսի 30-ի «Ջերմուկի համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 31-ի N 28-Ա որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» N 24-Ա որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			

Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա		
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....6..... դեմ-....0..... ձեռնպահ- ..0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2014 փետրվարի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2015թ. N 7-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼՃԱԿՆԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ,ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԳՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի հիման վրա ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. համաձայնվել Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող արհեստական լճակները մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ հանգստի գոտու կազմակերպում, տարեկան վարձավճարի մեկնարկային գները, վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ համաձայն աղյուսակի.

Անշարժ գույքի անվանումը	հասցեն	Մակերեսը /հա/	Կադաստրային ծածկագիրը	Նպատակային նշանակությունը	Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը	Վարձակալմամբ օգտագործելու ժամկետը
Արհեստական լճակ	Մյասնիկյան փողոց N 2/4	0,26618	10-002-0009-0017	Հողամասը՝ ջրային Շինությունը՝ արտադրական	15000	50 տարի
Արհեստական լճակ	Մյասնիկյան փողոց N 1/1	1,39307	10-002-0009-0007	Հողամասը՝ջրային Շինությունը՝ արտադրական	50000	50 տարի

2. Արգելել ջրօգտագործումը արհեստական լճակներից:

3. Սահմանել, որ մրցույթում հաղթողը պարտավոր է՝

ա/ ապահովել լճակների ջրային մակերեսների և հարակից տարածքների ամենօրյա սանիտարական մաքրումը,

բ/ պահպանել լճակների և հարակից տարածքների կարգավիճակը որպես հանգստի գոտիներ,

գ/ պահպանել լճակների ջրային մակերեսը և ծավալը՝ վարձակալման պահի դրությամբ,

դ/ սպասարկման ծառայությունների կազմակերպումը և (կամ) ենթավարձակալությամբ տրամադրումը կատարել համայնքի ղեկավարի գրավոր թույլտվությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա		
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...6... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 փետրվարի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2015թ. N 8-Ա

« ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» ՏԵՂԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը. հավանություն տալ «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն»-ի հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրի» (ՇՄՊՏԳԾ) շրջանակներում մշակված «Ջերմուկ քաղաքի շրջակա միջավայրի իրավիճակի վերլուծություն. գործողությունների ծրագիր» տեղական բնապահպանական գործողությունների ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին միջոցներ ձեռնարկել ծրագրի գործողությունների պլանով նախատեսված միջոցառումներն իրականացնելու ուղղությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի	բացակա		
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա		
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		

Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....6..... դեմ-.....0..... ձեռնպահ- ...0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 փետրվարի 27
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի համայնքի ավագանու 2015 թվականի
փետրվարի 27-ի N 8-Ա որոշման

ՋԵՐՄՈՒԿԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Երևան 2015

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹԻՄ

Նունե Հարությունյան	ԿՏԲԿ հայաստանյան գրասենյակի տնօրեն
Տիգրան Օգանեզով	ՇՄՊՏԳ ծրագրի համակարգող
Դշխուհի Սահակյան	կ.գ.թ. ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ/ԿՏԲԿ ՇՄՊՏԳԾ փորձագետ
Էվելինա Ղուկասյան	կ.գ.թ. ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ/ԿՏԲԿ ՇՄՊՏԳԾ փորձագետ
Լիլիթ Զոհրաբյան	Ջերմուկ քաղաքի ծրագրի տեղական համակարգող
Էմմա Ավոյան	ԿՏԲԿ աշխատակից

Ջերմուկ քաղաքի շահագրգիռ կողմերի խորհուրդ

Գրքում օգտագործված լուսանկարները տրամադրվել են հեղինակների, Լիլիթ Զոհրաբյանի և Նարեկ Միրզոյանի կողմից:

Ծրագրի իրականացման աշխատանքային խումբն իր երախտագիտությունն է հայտնում Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանին, Ջերմուկի քաղաքապետարանի գլխավոր մասնագետ Արսեն Գառնիկյանին, քաղաքապետարանի աշխատակիցներին, ինչպես նաև Ջերմուկի «Արմենիա» առողջարանի տնօրեն Վարդան Սարգսյանին ծրագրի ընթացքում ցուցաբերած շարունակական աջակցության և օգնության համար:

Ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այս գրքի տպագրությունում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ 4
1. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 6
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ 17
2.1. Ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը 19
2.1.1. Համայնքի աշխարհագրական դիրքը 19
2.1.2. Քաղաքի և մերձակայքի բնական և պատմական հուշարձանները 20
2.2. Կլիմա 21
2.3. Երկրաբանական կառուցվածք, ռելիեֆ և տեկտոնիկա 22
2.3.1. Օգտակար հանածոներ 22
2.3.2. Ռելիեֆ, տեկտոնիկա 23
2.3.3. Լանդշաֆտային գոտիներ 24
2.4. Ջրային ռեսուրսներ 24
2.4.1. Մակերևութային ջրեր 24
2.4.2. Հանքային ջրեր 25
2.5. Հողեր 26
2.6. Կենսաբազմազանություն 26
2.6.1. Կենդանական աշխարհ/ֆաունա 26
2.6.2. Հիմնական բուսական համակեցություններ/ֆլորա 31
2.6.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ 33
3. ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 34
3.1. Բնակչություն 34
3.1.1. Ժողովրդագրություն/պատկերն ըստ 2013թ. 34
3.1.2. Արտագաղթ 34
3.2. Սոցիալ-տնտեսական իրավիճակը 35
3.3.Առևտրի և սպասարկման ոլորտ 35
3.4. Սպառողական զամբյուղ 37
4. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 37
4.1. Արդյունաբերություն 37
4.2. Քաղաքի ինֆրակառուցվածքը 39
4.2.1. Ջրմուղ-կոյուղու համակարգ 39
4.2.2. Աղբահանություն 41
4.2.3. Հեռահաղորդակցություն 41
4.2.4. Տրանսպորտ և տրանսպորտային ցանց 41
4.2.5. Էներգամատակարարում 42
4.2.6. Գազամատակարարում 42
4.2.7. Առողջապահություն 42
4.2.8. Կրթություն և մշակույթ 42
4.2.9. ՀՀ ԱՀՆ փրկարարական ծառայություն 46
4.2.10. Ոչ կառավարական և հասարակական կազմակերպություններ 47
4.2.11. Զանգվածային լրատվամիջոցներ 47
5. ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 48
5.1. Մթնոլորտային օդի որակ 48
5.2. Մակերևութային ջրերի որակ 48
5.2.1.Ջրերում ծանր մետաղների պարունակությունները 48
5.2.2. Խմելու ջուր և առոգման համակարգ 49
5.3. Կոշտ կենցաղային թափոնների անբավարար (ԿԿԹ) կառավարում 49
5.3.1. Արդյունաբերական թափոններ 49
5.4. Կենսաբազմազանությանը սպառնացող վտանգ 49
5.5. Քաղաքացիների առողջական վիճակը 49



ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ

Հանքային ջրերի ակունքների մոտ գտնվող Ջերմուկ բնակավայրը գոյություն է ունեցել դեռ շատ վաղ ժամանակներից, իսկ նրա կազդուրիչ հանքային ջրերը միշտ օգտագործվել են ինչպես ժողովրդի, այնպես էլ իշխանների կողմից՝ ամենատարբեր հիվանդությունների բուժման նպատակով, ինչի մասին են վկայում միջնադարում կառուցված լողավազանի մնացորդները...

ԽՍՀՄ տարիներին Ջերմուկը համամիութենական նշանակության քաղաք-առողջարան էր, իսկ նրա հաջողության գրավականը, յուրահատուկ բաղադրությամբ բուժիչ հանքային ջրերից զատ, նաև բացառիկ մաքուր օդը: Այս երկու կարևորագույն գործոններն այսօր կրկին վերականգնում են իրենց արդիականությունը՝ Ջերմուկ բերելով բազմաթիվ զբոսաշրջիկների: Այժմ արդեն քայլեր են ձեռնարկվում քաղաքի երբեմնի փառքը վերականգնելու ուղղությամբ, ինչի մեկնարկն ազդարարվեց ՀՀ կառավարության կողմից 2008թ. Ջերմուկը զբոսաշրջային կենտրոն հայտարարելով՝ սկիզբ դնելով քաղաքի բազմակողմանի զարգացման մի նոր փուլի: Կարևորագույն քայլերից հաջորդը հայ-շվեյցարական ծրագրի իրականացումն էր: ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Ջերմուկի քաղաքապետարանի և շվեյցարական «Թայգեր Դեվ Սուիսս» ընկերության միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ մշակվել և ներկայացվել է քաղաքի նոր հատակագիծը՝ ըստ «Ջերմուկ քաղաքի հեռանկարային զարգացման պլան»-ի, որով նախատեսվում է Ջերմուկը դարձնել ամբողջ տարին գործող և միջազգային չափանիշներին համապատասխանող, առողջ և ակտիվ ապրելակերպի զբոսաշրջային վայր: Զբոսաշրջության ոլորտում արձանագրված հաջողություններից մեկը 2013թ. Ջերմուկում դեսպանների ակումբի հիմնադրումն էր, որի կազմում ներգրավված են Հայաստանում դիվանագիտական առաքելություն իրականացնող շուրջ 23 երկրների արտակարգ և լիազոր դեսպաններ:

Ժամանակի հետ համընթաց քայլող և զարգացող քաղաքում մշտապես ընթանում են շինարարական աշխատանքներ, կառուցվում են նոր առողջարանային համալիրներ և հյուրանոցներ, սրճարաններ և հանգստի գոտիներ, պարբերաբար բարեկարգվում են փողոցներն ու բակերը: Բնականաբար այդ ամենն իր ազդեցությունն է ունենում քաղաքի ընդհանուր մաքրության վրա, ինչն էլ մտահոգում է և՛ բնակիչներին, և՛ հյուրերին: Ուստի անհրաժեշտ են մի շարք ներդրումային ծրագրեր, որոնք նպատակաուղղված կլինեն կանաչ

գոտիների հիմնմանը և ընդլայնմանը: Քաղաքապետարանի և հասարակական կազմակերպությունների կողմից արդեն իսկ իրականացվել են կանաչ տարածքների ընդլայնման մի շարք աշխատանքներ:

Քաղաքի մաքրությունն այսօր առաջնահերթ խնդիր է համարվում Ջերմուկում: Աղբահանության ոլորտում կատարվող աշխատանքների որակի գնահատականը, բազմաթիվ զբոսաշրջիկների դրական արձագանքից զատ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Համայնքների միության կողմից կազմակերպված մրցանակաբաշխության ժամանակ «Մաքուր համայնք- 2013» մրցանակին արժանանալն է: Քաղաքի համար նշված ոլորտում այժմ գերխնդիրը աղբի ճիշտ կառավարումն է (առանձնացված աղբահանություն, քաղաքային աղբավայրի տեղափոխում և աղբի վերամշակում):

Շնորհակալ եմ Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնին՝ իրականացված ծրագրի համար, որի շնորհիվ ուսումնասիրվեցին, քննարկվեցին, բացահայտվեցին Ջերմուկում առաջնահերթ համարվող բնապահպանական հիմնախնդիրները և նախանշվեցին դրանց լուծման ուղիները: Համատեղ ուժերով ստեղծվեց համապարփակ մի փաստաթուղթ՝ «Ջերմուկի շրջակա միջավայրի իրավիճակի վերլուծության փաստաթուղթ»-ը, որը կարևոր նշանակություն կունենա հետագա ներդրումային ծրագրերի ներգրավման համար:

Ջերմուկի քաղաքապետ՝ Վարդան Հովհաննիսյան

1. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

2014 թվականի մայիս ամսին Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան ֆինանսական աջակցությամբ Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղը (ԿՏԲԿ) սկսեց Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի «Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրի» (ՇՄՊՏԳԾ) մշակման աշխատանքները:

Ծրագրի նպատակներն են.

- Նպաստել համայնքի շրջակա միջավայրի իրավիճակի բարելավմանը հստակ ռազմավարությունների կիրառման միջոցով:
- Բարձրացնել բնապահպանական խնդիրների վերաբերյալ համայնքի անդամների իրազեկվածության աստիճանը:
- Հզորացնել տեղական ինքնակառավարման մարմինների և ՀԿ-ների կառավարման և բնապահպանական ծրագրերի իրականացման, ինչպես նաև առկա բնապահպանական խնդիրների լուծման կարողությունները:
- Բացահայտել հիմնական բնապահպանական խնդիրները, գնահատել նրանց առաջնայնությունը:
- Մշակել շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ծրագիր:

Վերոհիշյալ նպատակների հիմքում ընկած է բնապահպանական խնդիրների որոշումների կայացման և միջոլորտային համագործակցության գործընթացներում հանրային մասնակցության ապահովման և տեղական մակարդակում բնապահպանական պլանավորման իրագործման սկզբունքը:

Համաձայն ծրագրի աշխատանքային պլանի՝ ծրագրի թիմի կողմից իրականացվել են հետևյալ հիմնական գործողությունները:

<u>Ծրագրի քաղաքային համաժողով</u>

2014թ. հունիսի 23-ին ԿՏԲԿ հայաստանյան մասնաճյուղը Ջերմուկ քաղաքում անցկացրեց քաղաքային համաժողով, որի նպատակն էր քաղաքացիական հասարակության լայն խավերին իրազեկել Հայաստանում ԱՄՆ դեսպանատան կողմից ֆինանսավորվող ծրագրի մեկնարկի վերաբերյալ, ինչպես նաև հանդիպել Ջերմուկ համայնքի անդամներին՝ բացահայտելու և քննարկելու քաղաքում առկա բնապահպանական խնդիրները:

Ծրագրի քաղաքային համաժողովին ներկա էին քաղաքացիական հասարակության ավելի քան 30 ներկայացուցիչ, Ջերմուկի քաղաքապետ պարոն Վարդան Հովհաննիսյանը, քաղաքի ավագանու անդամները, պաշտոնյաներ տարբեր

ենթակառուցվածքներից, ԿՏԲԿ հայաստանյան մասնաճյուղի աշխատակազմը, ՀՀ բնապահպանության նախարարության ՇՄՊՏԳԾ պատասխանատու Լարիսա Խառատովան և Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հանրային հարցերով դրամաշնորհային մասնագետ Լիանա Սահակյանը:

Ծրագրի գաղափարն արժանացավ համաժողովի մասնակիցների ուշադրությանը և դրական արձագանքին, որոնք կիսեցին իրենց մտավախությունները և տեսակետները՝ կապված Ջերմուկի բնապահպանական խնդիրների և դրանց լուծման ուղիների հետ, ինչպես նաև պատրաստակամություն հայտնեցին աջակցելու և ցուցաբերելու ակտիվ մասնակցություն ծրագրի իրականացման գործընթացին: Համաժողովի ընթացքում ծրագրի թիմը և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները եկան ընդհանուր փոխհամաձայնության՝ հետագա գործողություններն իրականացնել համաձայն համայնքի բնապահպանական գործողությունների պլանի: Համաժողովն ավարտվեց ծրագրի կարևորության վերաբերյալ շեշտադրմամբ: Ծրագրի շրջանակներում որոշվեց ստեղծել շահագրգիռ կողմերի խորհուրդ, որն իր կազմ պետք է ընդգրկեր քաղաքացիական հասարակության ակտիվ ներկայացուցիչներին (քաղաքացիներ, տեղական ինքնակառավարման պաշտոնյաներ, ՀԿ-ներ, համայնքահեն կազմակերպություններ, բիզնես և մասնավոր հատված, երիտասարդներ և կանայք), ովքեր հետաքրքրված են Ջերմուկ քաղաքի բնապահպանական խնդիրների լուծմամբ:



Համաժողովի ընթացքում մասնակիցները նաև լրացրին ծրագրի փորձագետների կողմից նախօրոք մշակված հարցաթերթիկներ՝ ուղղված Ջերմուկ քաղաքի բնապահպանական հիմնախնդիրների բացահայտմանը: Ստացված արդյունքների վերլուծությունը հնարավորություն ընձեռեց ստանալու բնապահպանական խնդիրներին առնչվող՝ Ջերմուկ քաղաքի առկա իրավիճակի նախնական պատկերը: ԿՏԲԿ հայաստանյան գրասենյակի, ՇՄՊՏԳ ծրագրի թիմի փորձագետները հատկապես ընդգծեցին, որ ծրագիրը գլխավորապես կարևորում և

մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիական հասարակության հետ համագործակցության լավագույն ուղիներին, ժողովրդավարական գործողությունների ապակենտրոնացմանը, Ջերմուկ քաղաքի շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների պլանի մշակման և զարգացման գործընթացներում ժողովրդավարական մոտեցումների ուղղորդման միջոցով:

<u>Ծրագրի շահառուների խորհրդի ստեղծում</u>



Ելնելով ծրագրի ռազմավարական պահանջներից՝ քաղաքային մեկնարկային համաժողովի ավարտից անմիջապես հետո Ջերմուկ քաղաքում ստեղծվեց ծրագրի իրականացման շահագրգիռ կողմերի հանձնախումբ (ՇԿՀ), որն իր աշխատանքը մեկնարկեց «Արմենիա» առողջարանային համալիրում: Քաղաքացիական հասարակության 20-24 ներկայացուցիչ, որոնք պատրաստակամ էին ակտիվորեն մասնակցելու ՇՄՊՏԳԾ փաստաթղթի մշակման գործընթացին և ապահովելու համայնքի ընդհանուր բարեկեցությունը, կամավոր հիմունքներով ներգրավվեցին ծրագրի շահագրգիռ կողմերի հանձնախումբ: Արդեն իսկ ստեղծված ՇԿՀ-ի անդամները, արտահայտելով իրենց հետաքրքրությունները իրականացվելիք բազմակողմանի գործողությունների և ներդրվող միասնական ջանքերի վերաբերյալ, ստանձնեցին նաև պատասխանատվություն և պարտավորություն՝ ապահովելու աշխատանքների արդյունավետությունը:

<u>Ուսուցողական դասընթաց ՇՄՊՏԳԾ մեթոդաբանության վերաբերյալ</u>

Ծրագրի մեկնարկից հետո շահագրգիռ կողմերի և ծրագիրն իրականացնողների միջև ձեռք բերված փոխհամաձայնության շնորհիվ ստեղծվեցին նախադրյալներ՝ աշխատանքների հետագա ընթացքն ապահովելու համար: ՇՄՊՏԳ ծրագրի թիմը շարունակեց ծրագրով նախատեսված գործողությունների իրականացումը՝ ըստ աշխատանքային պլանի, և մանրակրկիտ ներկայացրեց ծրագրի հիմնական նպատակները և մեթոդաբանությունը:

Ծրագրի փորձագետների կողմից իրականացված երկօրյա ուսուցողական դասընթացների ընթացքում ներկայացվեցին ծրագրի իրականացման իրավական հիմքերը, հստակեցվեց, թե ինչ է պահանջվում ելակետային իրավիճակի

վերլուծության համար, ինչ է շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների պլանավորումը, որոնք են ռազմավարական պլանավորման սկզբունքները, որն է մասնակիցների դերը ՇՄՊՏԳԾ գործընթացում: Ծրագրի փորձագետների կողմից ներկայացված վերացական քաղաքի՝ Լիպվիլի օրինակի հիման վրա ՇԽ-ի անդամները խմբային աշխատանքների միջոցով բացահայտեցին և կարևորեցին այդ քաղաքի բնապահպանական հիմնախնդիրները՝ դասակարգելով և կազմելով «հիմնախնդիրների ծառը», ինչպես նաև մշակելով «նպատակների ծառը», և ծանոթացան ՇՄՊՏԳԾ մեթոդաբանությանը:

Ուսուցողական դասընթացը բավականին արդյունավետ էր, վերացական քաղաքի օրինակով մասնակիցներին փոխանցվեցին ՇՄՊՏԳԾ մեթոդաբանության կարևորագույն արժեքները, որոնք հետագայում օգտագործվեցին Ջերմուկի բնապահպանական հիմնախնդիրների բացահայտման և նպատակների ծառի մշակման իրականացման գործընթացներում: Երկօրյա ուսուցողական դասընթացի ժամանակ տեղական հեռուստաընկերությունը կազմակերպեց հարցազրույց ՇՄՊՏԳ ծրագրի փորձագետներ Դշխուհի Սահակյանի և Էվելինա Ղուկասյանի հետ: Իրենց հարցազրույցում ծրագրի փորձագետները հատկապես ընդգծեցին ծրագրի կարևորությունն ու անհրաժեշտությունը կապված՝ Ջերմուկ քաղաքի ներկայիս բնապահպանական իրավիճակի հետ:

Հանդիպման ընթացքում ստեղծվեցին ջերմ մթնոլորտ և համագործակցային պլատֆորմ, որը նպաստում է ինտերակտիվ փոխհամագործակցությանը և շրջակա միջավայրի իրավիճակի վերլուծության վերաբերյալ զեկույցի հաջող մշակման գործընթացին:

<u>Բնապահպանական խնդիրների նախնական բացահայտում</u>

Ջերմուկում կազմակերպված երկօրյա ուսուցողական դասընթացի ժամանակ քաղաքային համաժողովի մասնակիցների կողմից լրացված հարցաթերթիկների արդյունքների հիման վրա կատարվեց բնապահպանական խնդիրների նախնական վերլուծություն: Հարցաթերթիկը, որը նպատակ ուներ վեր հանելու Ջերմուկում առկա բնապահպանական հիմնախնդիրները, աջակցեց ծրագրի թիմին՝ ձևավորելու բնապահպանական խնդիրների նախնական պատկերը: Հետազոտությանը մասնակցում էր 30 բնակիչ, ովքեր ներկայացրին իրենց կարծիքները և տեսակետները՝ կապված քաղաքում առկա շրջակա միջավայրի իրավիճակի հետ: Հետազոտության արդյունքում ստացված տվյալները հավաքագրվեցին և խմբավորվեցին ծրագրի փորձագետների կողմից: Վերլուծության արդյունքում մասնակիցների կողմից նշված բնապահպանական երեք հիմնական խնդիրներն էին՝

- ✓ Աղբի ոչ արդյունավետ կառավարում՝ աղբավայրի բացակայություն (21 մասնակից):
- ✓ Անտառային տարածքների աղտոտում (17 մասնակից):
- ✓ Մակերևութային ջրերի աղտոտվածություն (10 մասնակից):

Բացի բնապահպանական երեք հիմնախնդիրներից, համաժողովի մասնակիցները նշել էին նաև որոշ ենթախնդիրներ, որոնք ծրագրի փորձագետների կողմից դասակարգվել և խմբավորվել են ըստ վերոնշյալ բնապահպանական երեք հիմնախնդիրների: Այդ ենթախնդիրներն են՝

Անտառի անբավարար կառավարում

- ✓ Շինարարական նպատակներով անտառա և ծառահատումների իրականացում (13 ձայն):
- ✓ Անտառվերականգնման սահմանափակ գործողություններ: Կանաչ տարածքների ընդլայնման խնդիրներ (9 ձայն):
- ✓ Կենսաբազմազանության անբավարար պահպանություն, որսագողության դեմ պայքարի անարդյունավետություն (9 ձայն):

Ջրային ռեսուրսների անբավարար կառավարում

- ✓ Մակերևութային ջրերի աղտոտում (10 ձայն):
- ✓ Ջրային էկոհամակարգերի դեգրադացիա՝ փոքր հէկ-երի ազդեցության հետևանքով (15 ձայն):
- ✓ Կեղտաջրերի մաքրման կայանի բացակայություն (10 ձայն):

Բնապահպանական կրթության, իրազեկվածության և ձևավորված վարքագծի ցածր մակարդակ (9 ձայն):

<u>Խնդիրների առաջնահերթության սահմանում, տեսլական և ռազմավարական նպատակներ</u>

2014 թվականի հուլիսի 10-11-ին տեղի ունեցավ ծրագրի շահառուների խորհրդի հերթական հանդիպումը: Հանդիպման ժամանակ ծրագրի փորձագետները ՇԽ անդամների հետ համատեղ կազմեցին Ջերմուկ քաղաքի բնապահպանական հիմնախնդիրների ցանկը՝ ըստ վերհանված խնդիրների կարևորության և լուծման հրատապության: Ամենաշատ ձայները ստացած խնդիրները դասակարգվեցին որպես Ջերմուկ քաղաքի համար ամենահրատապ հիմնախնդիրներ: Վերլուծության և ակտիվ քննարկումների

արդյունքում տարբերակվեցին բնապահպանական 9 ամենահրատապ հիմնախնդիրները, որոնք ներկայացվում են ձեր ուշադրությանը՝

Աղյուսակ 1. Ջերմուկ քաղաքի բնապահպանական հիմնախնդիրները

Հ/հ	Հիմնախնդիր	Միավոր
1	Աղբի ոչ արդյունավետ կառավարում՝ աղբավայրի բացակայություն	21
2	Անտառային տարածքների աղտոտում	17
3	Անտառվերականգնման սահմանափակ գործողություններ: Կանաչ տարածքների ընդլայնման խնդիրներ	14
4	Շինարարական նպատակներով անտառ և ծառահատումների իրականացում	13
5	Ջրային էկոհամակարգերի դեգրադացիա փոքր հէկ-երի ազդեցության հետևանքով	15
6	Կեղտաջրերի մաքրման բացակայություն	10
7	Մակերևութային ջրերի աղտոտվածություն	10
8	Կենսաբազմազանության անբավարար պահպանություն, որսագողության դեմ պայքարի անարդյունավետություն	9
9	Բնապահպանական կրթության և իրազեկության ցածր մակարդակ	9

Ջերմուկ քաղաքի բնապահպանական հիմնախնդիրների շուրջ ձեռք բերված փոխհամաձայնությունից հետո ՇՄՊՏԳԾ մեթոդաբանության հիման վրա դասակարգվեցին բնապահպանական հիմնախնդիրները, և ձևավորվեց հիմնախնդիրների ծառը, որն իրականացնելու համար փորձագետների կողմից օգտագործվեցին գնահատման 6 սանդղակով աղյուսակը (շահառուների թվաքանակ, սպառնալիքը մարդու առողջության վրա, վտանգի ազդեցության չափը շրջակա միջավայրի վրա, ժամանակացույցի բարելավում, գործողությունների/միջոցառումների արժեքը, ազդեցությունը սոցիալական պայմանների վրա) և առաջնայնությունը որոշող 3 ցուցանիշները (բարձր, միջին և ցածր):

<u>Տվյալների հավաքագրում/Շրջակա միջավայրի իրավիճակի գնահատման զեկույցի պատրաստում Ջերմուկ քաղաքի համար</u>



2014 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին ծրագրի փորձագետներն ակտիվորեն աշխատում էին Ջերմուկ քաղաքի Շրջակա միջավայրի իրավիճակի գնահատման զեկույցի

մշակման և զարգացման գործընթացի վրա: Փաստաթղթի նախնական տարբերակը կազմվել է Ջերմուկ քաղաքի տարբեր ենթակառուցվածքների, հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքի ավագանու հետ ունեցած հանդիպումների, քննարկումների արդյունքում ձեռք բերված տվյալների հավաքագրման, վերլուծության և մշակման միջոցով: ՇՄԻԳ զեկույցը բաղկացած է բազմաթիվ մասերից, որոնցում ներառված է տեղեկատվություն Ջերմուկ քաղաքի աշխարհագրական դիրքի, կլիմայի, հողերի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության (կենդանական և բուսական աշխարհ), ռելիեֆի, օգտակար հանածոների, առողջապահության, զբաղվածության, արտագաղթի, սոցիալ-տնտեսական իրավիճակի, գյուղատնտեսության, անասնապահության և բազմաթիվ այլ ոլորտների վերաբերյալ:

Զեկույցը նաև ներառում է տեղեկատվություն բնապահպանական հիմնախնդիրների վերլուծության վերաբերյալ (ըստ յուրաքանչյուր ոլորտի), շահառուների խորհրդի անդամների կողմից ներկայացված առաջարկություններ և ռազմավարական մոտեցումներ՝ ուղղված այդ հիմնախնդիրների լուծմանը: Ակնհայտ է, որ ՇՄԻԳ զեկույցի մշակումն ու պատրաստումը պահանջում են ամբողջական տվյալներ, համալիր մոտեցում, Ջերմուկ քաղաքում բոլոր ոլորտների մանրակրկիտ վերլուծություն, ինչպես նաև տեղեկատվության պարբերաբար վերանայում և ճշգրտումներ տեղական ինքնակառավարման մարմինների, ՇԽ անդամների և այլ համապատասխան հետաքրքրված անձանց կողմից: Այս համատեքստում՝ ծրագրի թիմն ակտիվորեն իրականացրել և շարունակում է իրականացնել կանոնավոր դաշտային այցելություններ, հանդիպումներ, քննարկումներ և հանրային լսումներ:

Հանդիպում քաղաքի գլխավոր ճարտարապետի հետ

Աշխատանքային հանդիպումը քաղաքի գլխավոր ճարտարապետ Արսեն Գառնիկյանի հետ կայացավ քաղաքի ապագայի և հնարավոր առաջընթացի հետ կապված երկխոսության շուրջ: Քննարկվեցին Ջերմուկի նորացված գլխավոր հատակագիծը և քաղաքի ընդլայնման հնարավորությունները:



Հանդիպումներ քաղաքում գործող հիմնարկ-ձեռնարկություններում

Աշխատանքային խումբը հանդիպեց առողջապահության՝ Ջերմուկի առողջության կենտրոնի տնօրեն Մանուշակ Նալբանդյանի, արտակարգ իրավիճակների

փրկարարական ծառայության՝ ՀՀ ԱԻՆ Ջերմուկի ջոկատի հրամանատար Բենիկ Մինասյանի, Հայջրմուղկոյուղի ՓԲԸ տնօրեն Նորիկ Սեդրակյանի, սոցիալական ապահովագրության, ՀՀ հիվանդությունների վերահսկման կանխարգելման ազգային կոմիտեի Ջերմուկի մասնաճյուղի տնօրեն Իրինա Ալեքսանդրիդիի հետ, ինչպես նաև «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ, Ամուլսարի հանքավայրը շահագործող Լիդիան Ինթերնեյշնալի և Գեոթիմ ՓԲԸ, «Արևաձուկ» ՍՊԸ ձկնաբուծարանի, Ջերմուկի ավազի հանքաքարի մշակման արտադրամասի ղեկավարության հետ՝ ոլորտներում առկա իրավիճակի և հնարավոր իրականացվելիք ծրագրերի քննարկման նպատակով:

Ծրագրի իրականացման աշխատանքային խումբն իր առաջին հանդիպումն անցկացրեց «Գեոթիմ» ՓԲԸ հայկական երկրաբանահետախուզական կազմակերպության գրասենյակում: «Գեոթիմ» ՓԲԸ-ն հիմնադրվել է 2005թ.: Ամուլսարը նոր հայտնաբերված ոսկու հանքավայր է՝ վերջին 20 տարիների ընթացքում առաջինը Հայաստանում: Այցի ընթացքում խումբը եղավ նաև նախատեսվող գործունեության տարածքում՝ ծանոթանալով աշխատանքների ծավալներին և շրջակա միջավայրին հասցվող հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցման ուղղությամբ նախատեսվող ծրագրերին:



Ծրագրի շրջանակներում 2014թ. հոկտեմբերի 30-ին Երևանում կազմակերպվեց կլոր սեղան-քննարկում՝ նվիրված Ջերմուկ քաղաքի «Տեղական բնապահպանական գործողությունների ծրագրի» նախնական արդյունքների ներկայացմանը և համայնքի վրա «Ամուլ սար» ծրագրի ունեցած հնարավոր ազդեցությանը:

Լիդիան Ինթերնեյշնալի և Գեոթիմ ՓԲԸ-ի կողմից ներկայացվեց Ամուլսար ծրագրի «Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման զեկույցի» նախնական տարբերակը:

Կլոր սեղանի ձևաչափով անցկացված քննարկումը հնարավորություն ընձեռեց քաղաքացիական հասարակության, անկախ փորձագետների, շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին՝ ԿՏԲԿ և Լիդիան ընկերությունների հետ միասին քննարկելու երկու կազմակերպությունների կողմից իրականացված

աշխատանքները և ուսումնասիրության արդյունքները բաց և կառուցողական միջավայրում: Տեղական փորձագետներն իրենց մտահոգությունը հայտնեցին արջերի բնակության վայրի հավանական փոփոխության շուրջ, ինչպես նաև հազվագյուտ բույսերի տեղափոխման վերաբերյալ, քանի որ այն դեռևս Հայաստանում փորձարկված գործողություն չէ, և որ այդ գործընթացը պետք է գիտականորեն ապացուցվի. բույսին հարկավոր է ժամանակ՝ միջավայրին հարմարվելու, և զարգացման բոլոր փուլերով անցնելու համար:

Ծրագրի մասին պարբերաբար հեռարձակվող նյութեր տարբեր լրատվամիջոցներում և http://maxinfo.am/news/show4096, http://maxinfo.am/news/show8319/, http://araratnews.am/jermuk-khaghakheh-mot-apagayum-kunena-aveli-makhur-shrjaka-mijavayr-lusankarner-maxinfo-am/ կայք էջերում:



2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ



Հայաստան աշխարհն իսկական դրախտավայր է, իսկ նրա բարձր, երկնասլաց գահը Ջերմուկն է: Այստեղ առատ է լույսը, ջերմ է արևը.....

Վիլյամ Սարոյան

Ջերմուկը գտնվում է պատմական Սյունիքի նշանավոր գավառներից մեկում՝ Վայոց Ձորում, որի վարչատարածքային սահմանները քիչ են փոփոխվել, այն ընդգրկում է Եղեգնաձորի և Վայքի շրջանները: Ջերմուկը՝ որպես բնակատեղի

և հանգստավայր, նույնքան հին է, որքան Վայոց Ձորի լեռնաշխարհը: Պատմական Ջերմուկը կառուցվել է Արշակունյաց տիրապետության օրոք՝ մ.թ. I դարում, այն եղել է Սյունյաց թագավորների և Օրբելյան իշխանատան ամառանոց-բուժավայրը: Միջնադարյան հայ մատենագրության մեջ քաղաքի անվանումը հարկատու գյուղերի ցանկում հիշատակվում է նաև XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի կողմից: Միջին դարերում այստեղ իշխել են Օրբելյանների և Ռոշյանների իշխանական տոհմերը, որոնք կառուցել են անառիկ ամրոցներ, մենաստաններ, կրթության օջախներ, պաշտպանական նշանակության կառույցներ: Իշխանական տները մեծ եկամուտներ էին ստանում Արփա գետի միջին հոսանքներում գտնվող ոռոգվող հողերից և հարուստ լեռնային արոտավայրերից: Իսկ Ջերմուկի տարածքները, որոնք շնչում էին հով անտառներով և քաղցրահամ ջրերով ու փայլում երփներանգ ծաղիկներով, օգտագործվում էին ամառային հանգիստն անցկացնելու համար:

XVII դարում Վայոց Ձորը ենթարկվում է Շահ Աբասի ամայացնող ավերիչ արշավին: Պարսկաստանի նոսր բնակեցված տարածքներն աշխատասեր հողագործներով և հմուտ արհեստավորներով բնակեցնելու համար, ինչպես նաև որոշ ռազմավարական նկատառումներից ելնելով՝ շահը որոշում է տեղահանել այս տարածքի բնակիչներին և բռնի ուժով Պարսկաստան տեղափոխել: 1604թ.-ից սկսվում է հայերի բռնի վերաբնակեցումը: Կրակի են մատնվում նրանց բնակավայրերը՝ գյուղերն ու քաղաքները: Ականատեսներն ասում են, որ երբ Շահ Աբասին հայտնում են, որ Վայոց Ձորում կանգուն է մնացել մեկ տուն, և կենդանի՝ մի կատու, նա վերադառնում և ոչնչացնում է տունն ու կենդանուն: Գաղթող հայերի քարավանին ոտնակոխ հետևում են թուրքական ավազակախմբերը, որոնք սպանում և թալանում են նրանց: Ազատված տարածքները բնակեցվում են թուրքական ցեղերով:

Վայոց Ձորում մղձավանջային վիճակը շարունակվում է մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորվելու պահը՝ 1828թ.: 1830 թվականից սկսվում են Ջերմուկի ընդերքի երկրաբանական և ջրերի բաղադրության ու հատկությունների ուսումնասիրությունները:

Դեռ հեթանոս հայերը խոնարհվում էին ջրի առաջ՝ որպես աստվածության, և աղբյուրների մոտ կանգնեցնում էին քարե պահապաններ՝ վիշապներ: Բազմաթիվ լեգենդներում հիշատակվում է, որ Արփա գետի վտակներից մեկը, որը հոսում էր Ջերմուկի տարածքով, ուներ «կենդանացնելու հատկություն», որին ձգտում էին հասնել վիրավոր թռչուններն ու գազանները, որոնք, խմելով այդ ջրից, վերակենդանանում էին, բուժվում և հեռանում:



Մեկ այլ լեգենդ նվիրված է Ջերմուկի ջրվեժի պատմությանը: 84մ բարձրությունից սկիզբ է առնում Ջերմուկի ջրվեժը, որն իր գեղեցկությամբ արժանացել է բանաստեղծական անվանման՝ «Ջրահարսի վարսեր»: Ասում են՝ բարձր ժայռի ծերպին կար մի ամրոց, որտեղ ապրում էր Ջերմուկի չքնաղ արքայադուստրը՝ ստեղծված կրակից և լույսից: Նա հասկանում էր բոլոր թռչունների և կենդանիների լեզուները: Աշխարհի բոլոր ծայրերից արքայադստեր ձեռքը խնդրելու էին գալիս փեսացուներ, սակայն նա մերժում էր բոլորին, քանզի նրա սիրտը պատկանում էր հովվի երիտասարդ, քաջարի ու գեղեցիկ որդուն: Ամեն օր՝ կեսգիշերից հետո, ամրոցի իր ննջարանի լուսամուտից դեռատի արքայադուստրը ձորն էր նետում երկար պարանի ծայրը, որով հովվի որդին խոր կիրճից բարձրանում էր իր սիրեցյալի մոտ: Զայրանում են հարևան թագավորները և զգուշացնում Ջերմուկի թագավորին. «Քո աղջիկը խենթացրել է մեր որդիներին: Եթե նրան չամուսնացնես մեր որդիներից որևէ մեկի հետ, մենք պատերազմ կսկսենք քո դեմ»: Հայրը փորձում է համոզել դստերը, սակայն ոչինչ չի ստացվում, և կատաղած արքան անիծում է նրան. «Եթե մեկ էլ հանդիպես հովվի որդուն, ջրահարս դառնաս և ջրից երբեք դուրս չգաս»: Սակայն դեռատի սիրահարներին ոչինչ չէր պահում հանդիպման գայթակղությունից: Եվ հերթական անգամ, որպեսզի իր սիրեցյալին օգնի բարձրանալու դոյակը, գեղեցկուհին պարանի փոխարեն ժայռի բարձունքից կախում է իր երկար ու գեղեցիկ վարսերը: Նույն ակնթարթին իրականանում է հոր անեծքը, գեղանի արքայադուստրը դառնում է ջրահարս, սակայն չի մոռանում իր սիրած տղային: Նա փռում է իր մազերը ձորի վրա՝ հասնելու իր սիրեցյալին, այստեղից էլ սկիզբ է առնում բնության այդ հրաշագեղ ջրվեժը, որը ժողովուրդն անվանում է «Ջրահարսի վարսեր»:

Ըստ գոյություն ունեցող մեկ այլ գեղեցիկ լեգենդի, որը կապված է առաջին ջրավազանի հետ, հազարավոր տարիներ առաջ այդ ավազանի տեղում եղել է փոքրիկ բնական լճակ: Մի անգամ արքայազնը որսի է գնում այդ լճակի մերձակայքը: Երկար քայլում է նա և հոգնելով նստում է Լուսաղբյուրի քարին ու ննջում: Հանկարծ նա լսում է թևերի շրշյուն, բաց է անում աչքերը և տեսնում է մի գեղեցիկ կարապ՝ լույսի պես ճաճանչող և ճերմակ: Կարապը ցած է գցում իր թևերը և վերածվում գեղեցկուհու: Արքայազնը գողանում է թևերը և խնդրում աղջկան մնալ իր հետ: Աղջիկը չի համաձայնում. «Ես երկրային էակ չեմ, ես լույս եմ, ոչ թե աղջիկ, ես կրակ եմ, բայց ոչ մարմին: Վերադարձրու՝ իմ թևերը, խնդրում եմ, այլապես ես կմեռնեմ»: Արքայազնը չի հավատում նրան և այրում է կարապի փետուրները: Աղջիկը արքայազնի աչքի առաջ փոքրանում է, դառնում լույսի ճառագայթ և ճչոցով սուզվում ջրի խորքը: Ասում են՝ ամեն գիշեր՝ ջրի երեսին, լույսի շող է երևում՝ և հենց մարդ է տեսնում , սուզվում է ջրի խորքը: Այդ օրից առ այսօր այդ լճակում ոչ մեկը չի լողանում, և ոչ մի կենդանի չի խմում այդ ավազանի ջուրը, անգամ այդ լճակի ձկները չեն որսում:

2.1. ՖԻԶԻԿԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2.1.1. Համայնքի աշխարհագրական դիրքը

Հայաստանի Հանրապետության հարավարևելյան մասում՝ անտառոտ լեռների գրկում՝ ծովի մակերևույթից 2080 մ բարձրության վրա, որը երկու մասի է բաժանվում Արփա գետի գեղատեսիլ կիրճով, գտնվում է գողտրիկ մի քաղաք, որը կոչվում է Ջերմուկ: Քաղաքի վարչական տարածքը շուրջ 5,5 հազար հեկտար է: Բնակավայրը հիշատակվում է՝ սկսած 13-րդ դարից՝ պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» աշխատության մեջ: Սակայն քաղաքի տարածքում գտնվող հին կիկլոպյան ամրոցի և 8-րդ դարի եկեղեցու ավերակներն ու մնացորդները խոսում են այն մասին, որ հանքային ջրերի ակունքների մոտ գտնվող Ջերմուկ բնակավայրը գոյություն է ունեցել շատ վաղուց: Ջերմուկի կազդուրիչ հանքային ջրերը դեռ շատ հնուց օգտագործվել են ինչպես հասարակ ժողովրդի, այնպես էլ Սյունյաց իշխանների կողմից ամենատարբեր հիվանդությունների բուժման նպատակով: Այդ մասին են վկայում միջնադարում կառուցված լողավազանի մնացորդները, որոնք վերակառուցվել և վերականգնվել են 1860-ական թվականներին ցարական պրիստավ Գևորգ Խանազյանի կողմից, և այժմ էլ ժողովուրդը լողավազանի մասին խոսելիս օգտագործում է նաև «Պրիստավի գյոլ» անվանումը: Չնայած պատմական հարուստ անցյալին՝ այսօրվա նոր քաղաքի հիմքը դրվել է միայն 1940 թվականին՝ առաջին առողջարանի կառուցման ավարտով: Հետագա տարիներին Ջերմուկը կառուցվել ու կառուցապատվել է, ստեղծվել են բոլոր հնարավորությունները ինչպես բնակչության, այնպես էլ հովեկների ակտիվ հանգստի, առողջության վերականգնման և զբոսաշրջության համար: 1967 թվականին քաղաքը ձեռք է բերել հանրապետական նշանակության քաղաքի, իսկ 1970 թվականին՝ համամիութենական նշանակության առողջարանի կարգավիճակ: 1980-ականներին քաղաքն ուներ շուրջ 10000 բնակիչ, շուրջ 2000 մահճակալով առողջարանների ու պանսիոնատների ցանց ՝ ակտիվ հանգստի և բուժման համար նախատեսված բոլոր ենթակառուցվածքներով ու ծառայություններով: Օբյեկտիվ պատճառներով առողջարանային քաղաքի ակտիվ կյանքը 1990-ականներից մեծ տեղատվություն ապրեց, որը սկսեց աշխուժանալ նշված տասնամյակի վերջերից: Այժմ քաղաքի առողջարանային և զբոսաշրջային համալիրը հարստացվել է ու գործում է շուրջ տարին: Ջերմուկը ոչ միայն բազմաթիվ լեգենդների բնաշխարհ է, այլև քաղաքում ու մերձակայքում սփռված բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններով ու տեսարժան կառույցներով, արկածային տուրիզմի սիրահարներին ձգող բազմաթիվ անդնդախոր ձորերով ու բարձր ժայռերով, քարանձավներով ու որսատեղիներով /Արփա-Սևան թունել, Կեչուտի ջրամբար,

Գնդեվանք, Վարդան Մամիկոնյանի քար, Գլաձորի միջնադարյան համալսարան, Նորավանքի համալիր և այլն/ հարուստ հանգստավայր:

1997 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված պայմանագրի համաձայն Ջերմուկը և ֆրանսիական Սան Ռաֆայել քաղաքները քույր քաղաքներ են: Կատարվում են բարեկամական փոխայցելություններ:

ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծի փոփոխությունները մշակվել են Արխիտոն ՍՊԸ-ի կողմից ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվերով 2012 թվականի հունիսի 6-ի ՈՊԸԱՇՁԲ-12/5 պայմանագրի հիման վրա:

2.1.2. Քաղաքի և մերձակայքի բնական և պատմական հուշարձանները

Ջերմուկը և քաղաքի հարակից տարածքները հարուստ են պատմամշակութային հուշարձաններով ու տեսարժան վայրերով՝ Արփա-Սևան թունել, Կեչուտի ջրամբար, Գնդեվանք, Վարդանի քար, Գլաձորի միջնադարյան համալսարան, Նորավանքի համալիր և այլն:

2.2. ԿԼԻՄԱ

Անկրկնելի է Ջերմուկի կլիման, որի գաղտնիքը բացատրվում է նրանով, որ շրջապատված է 2500-3000 մետր բարձրության հասնող լեռնաշղթաներով և միայն հարավարևմտյան ուղղությամբ Արփայի գեղատեսիլ կիրճն է, որ դարպաս է ծառայում Արաքսի հովտից եկող օդային հոսանքների ներխուժման համար: Քաղաքը գտնվում է 39 աստիճան 50 րոպե աշխարհագրական լայնության վրա, որտեղ արևը հասնում է համեմատաբար մեծ բարձրության (ամռանը արևի առավելագույն բարձրությունը հասնում է մինչև 73 աստիճան 40 րոպեի, իսկ ձմռանը՝ նվազագույնի՝ 23 աստիճանի): Արևի և քաղաքի բարձր դիրքի շնորհիվ, որոնք նպաստում են օդի թափանցիկությանը, նպաստավոր պայմաններ են ստեղծվում արևափայլի լարվածության համար:

Քաղաքի կլիման տիպիկ լեռնային է: Պարզ արտահայտված է բարձունքային գոտիականությունը: Այս բոլոր գործոնների շնորհիվ գեղեցիկ ու հաճելի է Ջերմուկի զով ամառը, և ավելի քան գեղեցիկ ու բազմերանգ՝ արևոտ աշունը: Իսկ ջերմուկյան ձմեռն իր տեսակի մեջ անկրկնելի է, երբ ամեն ինչ ծածկվում է մեկ մետրից ավելի սպիտակաթույր ձյան շերտով, որին սակայն ուղեկցում են պարզ, կապույտ երկինքն ու աչք շլացնող արևը: Մթնոլորտային տեղումները տարվա ընթացքում կազմում են 800մմ, մթնոլորտային ճնշումը հասնում է 600մմ-ի:

Քաղաքի հարավային դիրքը և ռելիեֆի գոգավորությունը՝ որպես ամպամածությունը նվազեցնող գործոններ, նպաստում են արևափայլի տևողությանը, որը հանրապետությունում ամենաբարձր ցուցանիշներից է (տարեկան 2300ժամ):

Օդի օրական միջին ջերմաստիճանը Ջերմուկում կազմում է՝ գարնանը՝ +0.4 աստիճան, ամռանը՝+15.3 աստիճան, աշնանը՝ +4.9 աստիճան, ձմռանը՝ -9 աստիճան:

Ձնածածկույթով օրերի թիվը 40—150 է: Ձնածածկույթը նախալեռնային գոտում պահպանվում է դեկտեմբերի երկրորդ կեսից մարտի սկիզբը, միջինլեռնային գոտում՝ նոյեմբերի սկզբից ապրիլի վերջը: Նախալեռներում տևական է ամառը (ավելի քան 5 ամիս), բարձրլեռնային գոտում՝ ձմեռը (ավելի քան 6 ամիս):

2.3. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՌԵԼԻԵՖ ԵՎ ՏԵԿՏՈՆԻԿԱ

2.3.1. Օգտակար հանածոներ

Վայքի բնական շրջանն աչքի է ընկնում երկրաբանական պայմանների յուրօրինակությամբ և օգտակար հանածոների բազմազանությամբ: Այստեղ հայտնաբերվել են բազմամետաղային, մոլիբդենի, պղնձի հանքավայրեր և երևակումներ: Ոչ մետաղային օգտակար հանածոներից կան շինանյութեր (ֆելզիտային տուֆ, կավեր, հրաբխային խարամներ և այլն): Վայոց Ձորի հանքավայրերի զգալի մասը շահագործվում է համապատասխան արտոնագրերի առկայության պայմաններում:

Աղյուսակ 2. Վայոց Ձորի մարզում շահագործվող հանքավայրերի ցանկ

Հանքային իրավունք կրող սուբյեկտի անվանումը	Հանքավայրի անվանումը	Լիցենզիայի համարը
«Պարսյուն» ՓԲԸ	Հեր-Հերի հրաբխային խարամ	ՀԱ-Լ-14/14 10.10.03թ.
«Վազո» ՍՊԸ	Խաչիկի տուֆաավազաքար /Գնիշիկի 1-ին և 2-րդ տեղ./	ՀԱ-Լ-14/67 12.02.04թ.
«Ամպրոպ» ՍՊԸ	Արենիի դեկորատիվ տրավերտին	ՀԱ-Լ-14/196 30.06.04թ.
«Վայքի Շիկ» ԲԲԸ	Մարտիրոսի ֆելզիտային տուֆ	ՀԱ-Լ-14/286 27.10.04թ.
«Վայքի Շիկ» ԲԲԸ	Պերեվալնիի անդեզիտաբա զալտ	ՀԱ-Լ-14/288 27.10.04թ.
«Վայք» ՍՊԸ	Վայքի գաբրոսիենիտ Վայքի տեղ.	ՀԱ-Լ-14/328 14.04.05թ.
«Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ	Սալիի տրավերտին	ՀԱ-Լ-14/369 N 160 18315 24.10.05թ.
«Նյոլիթա» ՍՊԸ	Խաչիկի տուֆաավազաքար /Մոմիկի տեղ./	ՀԱ-Լ-14/412 10.05.06թ.
«Արսքար» ՍՊԸ	Ջերմուկի հրաբխային խարամ	ՀԱ-Լ-14/436 26.07.06թ.
«Սարանիստ» ՍՊԸ	Էրթիչի քվարցիտ 3-րդ հանքաշերտ	ՀԱ-Լ-14/566 29.10.08թ.

«Վայքի ՀՇՇ» ՓԲԸ	Ջերմուկի ԱԿԽ /1 և 2 տ/մասեր/	ՀԱ-Լ-14/ 579 09.02.09թ.
«Գեոթիմ» ՓԲԸ ՀԱ	Ամուլսարի ոսկեբեր քվարցիտներ	Լ-14/588 N458 29724 03.04.09թ.
«ՎՀՀ» ՍՊԸ	Դիտաձորի կրաքար	ՀԱ-Լ-14/593 14.07.09թ.
«Թեքասար» ՍՊԸ	Վայոցսարի հրաբխային ավազներ	ՀԱ-Լ-14/634 25.08.10թ.
«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ	Սոֆի-Բինայի ոսկի բազմամետաղ	ՀԱ-Լ-14/647 03.12.10թ.
«Վայոց Ձորի ֆրուկտ» ՍՊԸ	Գնիշիկի քվարցիտ	ՀԱ-Լ-14/663 29.03.11թ.
«Մետպրոգրես» ՍՊԸ	Էրթիչի քվարցիտ	ՀԱ-Լ-14/695 14.10.11թ.

Ջերմուկ համայնքը հիմնականում հարուստ է հանքային աղբյուրներով: Համայնքի հարևանությամբ է գտնվում նաև Ամուլսարը, որը հարուստ է ոսկեբեր քվարցիտներով: Ամուլսարը գտնվում է Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի վարչական սահմանին՝ մայրաքաղաք Երևանից 170 կմ հեռավորության վրա: Այն վերջին 20 տարիների ընթացքում հայտնաբերված առաջին ոսկու հանքավայրն է Հայաստանում: Լայնամասշտաբ երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում Ամուլսարի հարստությունները բացահայտել է Գեոթիմ ՓԲԸ կազմակերպությունը, որը հիմնադրվել է 2005թ.: ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2006թ. ստացված արտոնագրի համաձայն՝ Գեոթիմ ՓԲԸ-ն երկրաբանահետախուզական աշխատանքներ է իրականացնում Ամուլսարի տարածքում: Լիդիան Ինթերնեյշնալ Լիմիթեդ ընկերությունը միջազգային շուկայում գործող բրիտանական կազմակերպություն է, որը ցուցակագրված է Տորոնտոյի (Կանադա) ֆոնդային բորսայում (գնագրում՝ TSX:LYD): Լիդիանը զբաղվում է հանքերի հետախուզմամբ ու զարգացմամբ և մասնագիտանում է ոսկու արդյունահանման աշխատանքում, որում ունի մեծ փորձ: Լիդիանի առավել խոշոր բաժնետերերն են՝ Միջազգային ֆինանսական կորպորացիան (Համաշխարհային բանկի խումբ), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը և «Նյումոնթ» լեռնահանքային կորպորացիան (ոսկու արդյունահանման ծավալով աշխարհում երկրորդ ընկերությունը): 2008թ. իրականացված հետախուզական աշխատանքների արդյունքում տարածքում հայտնաբերվել է 16.4 տոննա ոսկեբեր հանքանյութ: 2009թ. հանքարդյունահանման հատուկ լիցենզիա է ստացվել ՀՀ էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարությունից, և նույն տարվա դեկտեմբերին համապատասխան օրենսդրական պահանջների կատարման արդյունքում ստորագրվել է հանքարդյունաբերական աշխատանքի իրականացման համաձայնագիրը: 2010թ. մարտին ընկերությանը տրամադրվել է լեռնահատկացման ակտը: 2011թ. ապրիլի 5-ին «CSA Global» ընկերության կողմից իրականացված հանքային ռեսուրսների գնահատման համաձայն՝ ռեսուրսի ընդհանուր քանակը կազմում է 2.5 միլիոն ունցիա: Ներկայում Գեոթիմը

շարունակում է իր հետախուզական աշխատանքն Ամուլսարում՝ հնարավոր լրացուցիչ ծավալների հայտնաբերման նպատակով: Գործունեության սկզբից՝ 2005թ. ի վեր, ընկերությունը կատարել է մոտ 15 միլիոն ԱՄՆ դոլարի չափ ներդրում:

2.3.2. Ռելիեֆ, տեկտոնիկա

Շրջանը բնութագրվում է բարդ լեռնագրական կառուցվածքով: Ռելիեֆն այստեղ առանձնանում է բարձր աստիճանի մասնատվածությամբ: Լեռնաշղթաներն ունեն ընդհանուր կովկասյան տարածում և կազմավորված են երրորդական լճային գոյացումներով, որոնք ծածկված են հրաբխածին-նստվածքային ապարներով:

Չորրորդական ժամանակաշրջանում Արփա գետի վերին հոսանքը, որտեղ գտնվում է Ջերմուկ քաղաքը, ենթարկվում է ինտենսիվ հրաբխային ազդեցության:

Լավաների որոշ արտանետումներ հոսել են լեռների լանջերով և Արփա գետի հունով՝ առաջացնելով հրաբխային սարահարթ: Ջերմուկ քաղաքի տարածքում նկատվում է լավային 3 հոսք, որոնց ընդհատումների ժամանակ այստեղ առաջացել են ամբարտակային լճեր: Հրաբխային լավաները քաղաքի տարածքում հաճախ ստեղծում են խոշոր զառիթափեր:

Շրջանի հիմնական ջրային երակը Արփա գետն է, որը հոսում է քաղաքի միջին մասով: Այստեղ այն ստեղծում է խորը գետահովիտ, որը ձգվում է միջօրեականի ուղղությամբ: Ուսումնասիրվող տարածքում (հարթակում) Արփա գետ են թափվում մի քանի վտակներ, հիմնականում արևմուտքից:

2.3.3. Լանդշաֆտային գոտիներ

Ջերմուկ առողջարանը գտնվում է Վայոց Ձորի հյուսիս-արևելքում՝ Արփա գետի վերին հոսանքի ափամերձ պլատոյում՝ ծովի մակարդակից 2080.0 մ բարձրության վրա, շրջապատված Զանգեզուրի լեռնաշղթայով: Առողջարանին մոտենալիս խստաշունչ, չոր և ժայռոտ լանդշաֆտը մեղմանում է: Շրջապատող լեռների զառիթափի լանջերը ծածկվում են խիտ անտառաշերտով, իսկ ավելի բարձր՝ ալպիական բուսականությամբ, ինչն առողջարանի բնապատկերը համալրում է հմայիչ գեղեցկությամբ: Առատ է բուսածածկը, ավելի հաճախ են հանդիպում բուժիչ հանքային և քաղցրահամ սառնորակ ջրերի աղբյուրները: Արփա գետը վերին հոսանքներում լայնանում է՝ առաջացնելով 2 սարահարթ (պլատո), որտեղ տեղակայված է Ջերմուկը: Այդ սարահարթերը բոլոր կողմերից շրջապատված են հրաբխային կոներով, լավային ծածկույթներով: Հյուսիսային և հյուսիսարևմտյան կողմից այն շրջափակում են Վարդենիսի լեռնաշղթայի հարավային ալպյան առատ բուսականությամբ հարուստ լեռնալանջերը, իսկ արևելքից և հարավարևելքից՝ Սյունյաց (Զանգեզուրի) լեռնաշղթայի անտառապատ լեռնալանջերը:

2.4. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

2.4.1.Մակերևութային ջրեր

Արփա գետի ջրհավաք ավազանում գտնվող Կեչուտի ջրամբարը «Արփա-Սևան» հիդրոտեխնիկական կառույցի գլխամասային հանգույցն է, որից սկիզբ է առնում դերիվացիոն (ջրաթեք) թունելը, այն արհեստականորեն կապված է ազգային նշանակության քաղցրահամ ջրային ռեսուրսի՝ Սևանա լճի հետ, որի ընդհանուր երկարությունը մոտ 48.3 կմ է: Վերջինս տարեկան Սևանա լիճ է տեղափոխում 250 մլն մ³ ջուր՝ ներառելով Եղեգիս գետի և նրա վտակ Կարակայի ջրերը: Կեչուտի ջրամբարը, որի կառուցումն սկսվել է 1967 թվականից Արփա գետի վրա, գտնվում է Կեչուտ գյուղի մոտ՝ Ջերմուկ քաղաքի հարևանությամբ՝ 2000 մ բարձրության վրա, ունի 20 մլն մ³ ընդհանուր և 3 մլն մ³ օգտակար տարողության ջուր: Պատվարը քարալիցքային է՝ մոտ 50 մ բարձրությամբ, 230 մ երկարությամբ: Ընդհանուր ծավալը 22, 5 մլն մ³ է, օգտակար ծավալը՝ 3,5 մլն մ³, հայելու մակերեսը՝ 1,2 կմ²: Սնվում է Արփա գետից և մթնոլորտային տեղումներից:



2.4.2. Հանքային ջրեր

«Ջերմուկ» ը – թերմալ - բարձր թերմալ (t° 32°-64°C), թույլ թթվային չեզոք (pH 6.8-7.5), հիդրոկարբոնատա–սուլֆատա-նատրիումական, սիլիկատային, թույլ ածխաջրատային, թույլ հանքայնացված (M 4.0-4.7 գ/լ) ջուր է: Մի քանի հորատանցքերում ընդհանուր դեբիթը՝ 15 ժ/վրկ: Համարժեք է Ժելեզնովոդսկի (Ռուսաստան) և Կառլովի Վարի (Չեխիա) ջրերին: «Սայաթ-Նովա»-ն գտնվում է Դարա-Ցուրտ կիրճում (Ջերմուկ առողջարանին մոտ)՝ թերմալ–թույլ թերմալ (t° 23°-36°C), թույլ թթվային չեզոք (pH 6.8-7.0), հիդրոկարբոնատա-քլորիդային նատրիումական, սուլֆատա–հիդրոկարբոնատա - նատրիումական, կալցիումական, սիլիկատային, բորային, երկաթային, թույլ ածխաջրատային (CO_2 1.2-1.7 g/l), թույլ հանքայնացված (M 5.7-8.5 գ/լ) ջուր է: Որոշ հորատանցքերի ջրերը մոտ են Հանքավանի, Մաշուկյանի (Պյատիգորսկ) հանքային ջրերին: Ջերմուկ առողջարանի հիմնական բուժական գործոններն են՝ հիպերթերմալ ածխաջրատային հիդրոկարբոնատա–սուլֆատա-նատրիումական հանքային ջրերը, բարձր լեռնային բարենպաստ կլիման, անկրկնելի լանդշաֆտային առանձնահատկությունները, որոնց շնորհիվ բարձրլեռնային Ջերմուկ

առողջարանը ձեռք է բերել համաշխարհային համբավ և արժանի տեղն է գրավել հանրահայտ առողջարանների շարքում: Բարենպաստ լանդշաֆտա - կլիմայական պայմանների առկայությունը թելադրում է անհրաժեշտություն՝ օգտագործելու Արփա գետի գոգահովտի ցածրավայրը երկարատև և կարճատև հանգստի համար:

2.5.ՀՈՂԵՐ

Ջերմուկ քաղաքի հողի ակտիվ շերտի (0-70 սմ) քարքարոտությունը 40% է, 0-20 սմ հողի շերտում հումուսի պարունակությունը կազմում է 3%, դեգրադացված՝ էրոզիայի ենթարկված աղակալած հողերը կազմում են ընդհանուր հողատարածքների 40 %-ը: Ջերմուկ քաղաքում և շրջակա տարածքներում իրականացված հողային ծածկույթի ուսումնասիրությունները (կատարվել են 1985-1990 թթ.) ցույց են տվել, որ այն հիմնականում մաքուր է: Անալիզների նմուշների շուրջ 60%-ում աղտոտող նյութերի գումարային խտության ցուցանիշը չի գերազանցել ֆոնային սահմանները, 35% - 8–16-ը (թույլ աղտոտված), 20% - 16-32-ը (միջին աղտոտվածություն): Այսպիսով, Ջերմուկի առողջարանը և նրա շրջակայքը դասվում են նվազագույն աղտոտվածություն ունեցող շրջանների շարքում:

2.6. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Ջերմուկի քաղաքային համայնքի հարակից տարածքները բնութագրվում են հիմնականում որպես լեռնատափաստանային՝ մարգագետնային և ծառաթփային բուսականությամբ, լանդշաֆտներ՝ իրենց բնորոշ կենդանական տարրերի առկայությամբ: Այստեղ հայտնաբերվել է ողնաշարավոր կենդանիների 52 և անողնաշարավորների 388 տեսակ, որոնցից ՀՀ Կարմիր գրքում գրանցված է 15 տեսակ: Տարածքում հանդիպում են նաև մի շարք էնդեմիկներ (ինչպես Հայաստանի, այնպես էլ Անդրկովկասի և Կովկասի):

2.6.1. Կենդանական աշխարհ/ֆաունա

Ջերմուկի ամբողջ տարածքին բնորոշ են 12 կաթնասունների տեսակներ, որոնցից 5-ը գիշատիչներ են, 7-ը՝ միջատակերներ և կրծողներ: Թռչուններից գրանցվել է 44 տեսակ: Սողունները ներկայացված են 8 տեսակով, երկկենցաղները՝ 2 տեսակով: Համայնքի մերձակայքում առկա առավել հաճախ հանդիպող կենդանական աշխարհի ներկայացուցիչների մասին տեղեկատվությունը ներկայացվում է ստորև:

Սովորական ոզնի (*Erinaceus concolor* Martin, 1837)
Տարածման արեալը բավականին մեծ է: Հանդիպում է հյուսիսային անտառային և ոչ անտառային գոտիներում, մինչև 700-2500 մ ծ.մ.բ. վրա, երբեմն այգիներում, թփուտներով և բուսականությամբ առկա գետերի հովիտներում, հացահատիկային ցանքատարածքներում և բանջարանոցներում: Համաձայն գրականության մեջ



առկա տվյալների՝ տարածված է նաև կիսաանապատներում, լեռնատափաստաններում, մարգագետնատափաստաններում և անտառային գոտում (Даль, 1954): Ոզնին վարում է միայնակ, գիշերային կյանք: Բները պատրաստում է թփերում, փոսերում և քարանձավներում: Ունենում է ձմեռային և ամառային բներ: Սնվում է հիմնականում հասուն միջատներով, թրթուրներով, կողինջներով, հազվադեպ նաև անձրևորդերով: Բուսական կերերից նախընտրում է հատապտուղներ և մրգեր:

Նապաստակ (*Lepus europaeus* Pallas, 1778)

Նապաստակը հիմնականում տափաստանային կենդանի է: Հայաստանում հանդիպում է համարյա բոլոր լանդշաֆտներում (բացառությամբ անտառների կենտրոնական խիտ հատվածների և ամբողջական ժայռազանգվածների): Առավել մեծաքանակ է գիհու նոս բանտառներում՝ սերմնացանային տարածքներին կից գոտում: Հանդիպում է 400-3300մ ծ.մ.բ. վրա (Даль,1954): Սովորաբար բներ չեն փորում, թաքստոցներ չեն ունենում:

Վոլնուխինի գորշատամ (*Sorex Volnuchini* Ogn., 1921)
Փոքր կամ Վոլնուխինի գորշատամը տարածված է Առաջավոր, Մեծ և Փոքր Կովկասում և Անդրկովկասում (Соколов, 1989): Հայաստանում հանդիպում է հարավային և հյուսիսային անտառագոտիներում (Даль, 1954), ինչպես նաև լեռնատափաստանային թփուտներում և մինչև ալպիական գոտին ձգվող քարակույտային զանգվածներում:



Բեզոարյան այծ (*Capra aegagrus* Erxleben, 1777)
Բնակվում է ժայռոտ սարերում (Даль,1954)՝ սկսած Խոսրովի արգելոցից մինչև Մեղրու լեռնաշղթա (Гаспарян, 1969,WWF): Արփա գետի աջակողմյան մասում հաճախակի են դիտվում արածող առանձնյակներ: Տեսակն ընդգրկված է

ԲՊՄՄ Կարմիր գրքում՝ «խոցելի» (Vulnerable) կարգավիճակով:

Մուֆլոն (*Ovis orientalis gmelinii* (Blyth, 1841)

Մուֆլոնը հանրապետության տարածքում հանդիպում է Ուրցի լեռնաշղթայից մինչև Վայոց Ձոր, հասնում է Զանգեզուրի լեռնաշղթայի հարավային լանջերը՝ ընդգրկելով Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաները (Гаспарян, 1969; Явруян, 1970): Նրա տարածումն ամբողջ արեալով կրում է հատվածավոր, մոզաիկ բնույթ, որը կապված է վերջին 20-25 տարիների ընթացքում քանակության կտրուկ նվազման հետ: Նրանց համար որպես հիմնական ապրելավայրեր են 800-ից մինչև 2800 մ բարձրություններում գտնվող լեռնատափաստանային և մարգագետնատափաստանային տարածքները: Ամռանը բարձրանում են մինչև 3300 մ բարձրություններում գտնվող լեռնային մարգագետիններ: Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Քարակզաքիս (*Martes foina nehringi* Sat., 1905)

Հայաստանում տարածված է կովկասյան քարակզաքիսը: Քարակզաքիսի տարածվածության սահման ընդգրկում է ողջ Կովկասը, Անդրկովկասը, սահմանակից Իրանը և Թուրքիան (Даль, 1954; Гептнер, 1967): Տարածված է Հայաստանի ողջ տարածքում: Քարակզաքիսի կենսամիջավայրերն ընդգրկում են հանրապետության բոլոր ուղղահայաց գոտիները, այս կենդանին նախընտրում է գետերի և վտակների ակունքներին մոտ տարածքները: Որպես թաքստոց քարակզաքիսը սովորաբար օգտագործում է քարերի արանքների ճեղքերը, ծառերի արմատների միջև դատարկ տարածքները, փտած կոճղերը, փչակները, ինչպես նաև լքված, հին շինությունները:

Աքիս (*Mustela nivalis* Linnaeus, 1777)

Հայաստանում տարածված է ամենուրեք: Ապրելավայրերը ներառում են հանրապետության բոլոր լանդշաֆտային գոտիները՝ 400–3900 մ ծ.մ.բ. վրա (Касабян, 2001): Դաշտերով կտրված լեռնային տափաստանների գոտում այն բազմաքանակ է: Բազմաքանակ է նաև նոսրանտառներում, որտեղ կան ժայռաբեկորներ, բացատներ, գոգավորություններ և ձորակներ:

Գորշ արջ (*Ursus arctos* Linnaeus, 1758)

Հայաստանում բնակվում է Սիրիական գորշ արջը (*Ursus arctos syriacus* Hempet Ehr, 1828), որն առավելապես հանդիպում է հարավարևելյան շրջանների անտառներում և ժայռերում (Даль, 1954): Արջերի սննդառության մեջ ճարպակուտակման շրջանում գերակշռում են հատապտուղները և մրգերը, զգալի է նաև միջատների և մկնանման կրծողների մասնաբաժինը սննդում:

Գայլ (*Canis lupus cubanensis* Ognev, 1923)
Հայաստանում ամենուրեք տարածված է *Canis lupus cubanensis* Ognev, 1923 (= *C. l. hayastanicus* Dahl, 1951) տեսակը: Տարածման արեալն ընդգրկում է ողջ Կովկասը, Անդրկովկասը և դրանց հարող Իրանի և Թուրքիայի տարածքները: Գայլերը տարածված են հանրապետության ողջ տարածքում՝ ներառելով բոլոր լանդշաֆտային գոտիները: Գայլերի ապրելավայրերը շատ բազմազան են: Բնակվում է կիսաանապատների ժայռային զանգվածներում և լեռնային տափաստաններում, անտառային գոտու քարակույտերում և ժայռային ճեղքերում:

Սովորական աղվես (*Vulpes vulpes* L.)

Բավականաչափ տարածված կենդանի է: Հայաստանում աղվեսները զբաղեցնում են բոլոր բնակլիմայական գոտիները, կիսաանապատներից մինչև բարձր լեռները (Агаджанян, 1986): Ընդ որում աղվեսները հանդիպում են ոչ միայն բնության մեջ, այլև մարդածին լանդշաֆտներում, ինչպես նաև բնակավայրերի մերձակայքում, որտեղ նրանք առավել նպաստավոր միջավայր են գտնում: Սննդի մեջ օգտագործում է բացառապես այն ամենը, ինչ հաջողվում է բռնել կամ գտնել: Քաղաքային և գյուղական աղբավայրերի մշտական այցելուն է: Աղվեսները մեծ օգուտ են տալիս գյուղատնտեսությանը՝ ոչնչացնելով հացահատիկային մշակաբույսերով սնվող կրծողներին:

Լեռնային ճագարամուկ (*Allactaga euphratica* Thomas, 1881)
Միջին չափերի կենդանի է. մարմնի երկարությունը՝ 120-150 մմ: Մնացած հնգամատ ճագարամկներից տարբերվում է համեմատաբար կարճ ականջներով և պոչի փոքրիկ սպիտակ ծայրով: Մարմնի մեջքային մասը ժանգադարչնամոխրագույն է, փորի մասը սպիտակ (Мартиросян Б., Папанян С. 1983): Տարածված է Փոքր Ասիայում, Արևելյան և Հարավային Անդրկովկասում: Ունի զգալի ուղղահայաց տարածվածություն: Լեռնային վայրերում հանդիպում է բավականին մեծ բարձրությունների վրա: Հայաստանում բնակվում է՝ սկսած կիսաանապատներից և քսերոֆիտ լեռնային տափաստաններից մինչև 2500 մ ծ.մ բարձրություններում (Даль, 1954):

Սովորական դաշտամուկ (*Microtus arvalis* Pall., 1778)
Ջերմուկ համայնքի տարածքում ամենից հաճախ հանդիպող կենդանին է: Ապրում է խմբերով (գաղութներով): Խումբը բնակվում է 10-20 մ^2 տարածքի վրա պատրաստված բներում: Բներն իրար միացված են և կերակրման վայրերի հետ կապված են արահետների խիտ ցանցով: Ձմռանը փորում է ճանապարհներ ձյան տակ: Ձնածածկի վրա գրեթե դուրս չի գալիս, կացարանից դուրս արագորեն



ցրտահարվում է: Ամռանը սնվում է խոտով, հազվադեպ՝ սերմերով և միջատներով: Ձմռանը սնվում է ձյան տակ մնացած խոտով, սերմերով և կեղևով:

Փոքրասիական համստեր (*Mezocricetus brandti* Nehring, 1898)
Փոքրասիական համստերը միջին համստերների ցեղի ներկայացուցիչ է: Մարմնի երկարությունը՝ մինչև 150 մմ, պոչինը՝ մինչև 39 մմ: Մարմնի վերին մասում գերիշխում է գորշավուն երանգը: Տարածված է Փոքր Ասիայի լեռնային չոր տափաստաններում (300-3000 մ ծ.մ.բ.), Անդրկովկասում՝ հասնելով մինչև Արևմտյան Իրան (Гептнер,1967): Հայաստանում հիմնականում բնակվում է լեռնատափաստանային գոտում և լեռնատափաստանային հատվածներով Աշոցքի մարզից մինչև Սյունիքի մարզ (Попов, 2003): Բնակվում է լեռնային մոլախոտային և տարաբնույթ խոտաբույսերով հարուստ տափաստաններում, լեռնային մարգագետիններում, գյուղատնտեսական հողատեսքերում և դրանց մոտակայքում՝ սկսած 1200 մինչև 3000 մ ծ.մ.բ.: Խուսափում է խոնավ և անապատային տարածքներից: Փոքրասիական համստերը փորում է խորը և բարդ բներ՝ մի քանի խցերով և 1-3 ուղղահայաց մուտքերով, որոնցից միայն մեկն է դուրս գալիս հողի մակերես:

Կաթնասուններից պահպանության հատուկ կարգավիճակ ունեն հայկական մուֆլոնը, ջրասամույրը, լեռնային ճագարամուկը, փոքրասիական համստերը, բեզոարյան այծը:

Երկկենցաղները ներկայացված են 2 լայն տարածված տեսակներով՝ կանաչ դոդոշով (*Bufo viridis* Laurenti,1768, նկ.1) և փոքրասիական գորտով (*Rana macrocnemis* Boulenger,1886), որոնք հիմնականում հանդիպում են ջրաճահճային տեղամասերում և հանրապետությունում լայնորեն տարածված ու հաճախ հանդիպող տեսակների թվին են պատկանում: Փոքրասիական գորտը հանդիպում է ծ.մ.բ. 1400-1600 մ բարձրություններից սկսած ջրաճահճային էկոհամակարգերում, իսկ կանաչ դոդոշը պատկանում է ինտրազոնալ տեսակների թվին և հանդիպում է գրեթե ամենուր: Այս տեսակները գրանցված չեն ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: Ավելի ցածրադիր վայրերում հաճախակի մեծ քանակությամբ հանդիպում է լճագորտը (*Pelophylax ridibundus*, Laurenti,1768, նկ.2) և շատ հազվադեպ՝ փոքրասիական ծառագորտը (*Hyla savignyi* (Audouin, 1827): Վերջին տեսակը չնայած գրանցված չէ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում, սակայն նրա թվաքանակը հանրապետությունում ամենուրեք կրճատվում է:

Համաձայն գրականության տվյալների՝ տարածքում հանդիպում են սողունների հետևյալ տեսակները՝ օձերից՝ ձիթապտղագույն և բազմագույն սահնօձերը, պղնձօձը, հայկական լեռնատափաստանային իժը, հայկական իժը, ջրային լորտուն և 4 տեսակի մողեսներ: Վերը նշված տեսակներից պահպանության հատուկ

կարգավիճակ ունեն իժերի ընտանիքի (*Pelias (Vipera) eriwanensis* տեսակը և Ռադդեի իժը (*Montivipera (Vipera) raddei)*.

Գետի կարմրախայտ (Salmo trutta fario)
Ջերմուկի հարևանությամբ հոսող Արփա գետում հանդիպող հիմնական ձկնատեսակներն են՝ Հայկական տառեխիկը, Կարմրախայտը, Քուռի բեղլուն, Անդրկովկասյան սպիտակաձուկը:



2.6.2. Հիմնական բուսական համակեցություններ/ֆլորա

Տարածքի բուսական աշխարհի բազմազանությունը պայմանավորված է յուրահատուկ բնակլիմայական պայմաններով: Տարածքը հիմնականում ներկայացնում է Դարալագյազի ֆլորիստական շրջանը, որտեղ նկարագրված են մոտ 90 տեսակի անհետացող և հազվադեպ հանդիպող բույսեր: Տարածքի կարևորագույն առանձնահատկություններից է անտառներով շրջապատված լինելը: Անտառները հիմնականում ներկայացված են բնաշվային ծագում ունեցող ցածրաբուն, միջին տարիքի կաղնուտներով և գիհու նոսր անտառներով:

Ջերմուկի ձորի հատվածում՝ Արփա գետի հունով, տարածվում են գետահովտային անտառակները՝ կազմված բարդու, ուռենու, թեղու, թխկու, գիհու, մոշի, ազնվամորու, մասրենու, փաթաթվող բույսերից՝ կարմրանի, գայլուկի, հորոտի ծառաթփային բուսատեսակներից: Գետի կանյոնի ժայռերին հանդիպում են ծվծվուկներ, տերեփուկներ, չմենիներ, թանձրատերևազգիներ /զառնադմակ, թանթոնիկ/, քարկոտրուկներ, մեխակներ, գազեր, կծոխոր, մասրենի, նշենի, սալորենի, թխկի, գիհի:

Արփա գետի աջ և ձախ ափերին տարածվում են խոշորառէջ կաղնու (Quercus macranthera) բնական անտառները, որտեղ հանդիպում են նաև հացենու, արոսենու, փոշնու, իլենու, խցանային թեղու, դժնիկի, ցախակեռասենու, ալոճենու, վայրի տանձենու, խնձորենու, սալորենու ծառաթփային տեսակներ և տարբեր պտերներ: Ջերմուկ քաղաքում և շրջակայքում զգալի տարածքներ են զբաղեցնում սոճու և եղևնու անտառմշակույթները:

Անտառտնտեսական աշխատանքներն իրականացվում են Ջերմուկի անտառտնտեսության կողմից, որի տնօրինման տակ գտնվող անտառային տարածքը կազմում է շուրջ 4600.0 հա, այդ թվում՝ 2388.0 հա անտառածածկ: Անտառտնտեսության անտառային ֆոնդի տարածքը բաժանված է 2 անտառպետությունների՝ Ջերմուկի (2334.0 հա, այդ թվում 1211.0 հա անտառածածկ) և Սյունիքի (1856.0 հա, այդ թվում անտառածածկ 963.0 հա): Շուրջ 400.0 հա զբաղեցնում է Ջերմուկի անտառպարկը:

Ջերմուկի լեռնային անտառներն ունեն բացառիկ բնապահպանական (հողապահպան, ջրապահպան, կլիմայակարգավորիչ, առողջարարական) և կուրորտային նշանակություն, այդ պատճառով դասվում են 1 խմբում: Այդ խմբին պատկանող անտառներում արգելվում են գլխավոր օգտագործման հատումները:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից այս տարածքում հայտնաբերվել են զիվան Նախիջևանի (Cernalaria Nachiczevanica) /Հարավային Կովկասի էնդեմ/, գազ սաղանլուղի (Astrsgalus Saganlugensis) /Հայկական լեռնաշխարհի էնդեմ/, կաղնու անտառներում հազվադեպ հանդիպող արոսենի լուրիստանյանը (Sorbus Luistanica) և այլ բուսատեսակներ, որոնք այդ տարածքների ռեկրեացիոն նպատակով օգտագործման արդյունքում անհետացման են վտանգվել: Այստեղ հանդիպում են այնպիսի հազվագյուտ տեսակներ, որոնցից են զինգերիա բիեբերստեյնյանին (Zingeria biebersteiniana) և ծվծվուկ արաքսյանը (Silene araxina): Այս տարածքում են աճում արոսենի թամամշյանի (Sorbus tamamschjanae), տերեփուկի (Centaurea caroli-henrici), հաղարջենու (Ribes armena), շնդեղի (Colchicum ninae), ստենոտենիայի (Stenotaenia daralaghezica), ձիալախուրի (Smyrniopsis armena) էնդեմ տեսակները:

Կենդանական աշխարհն աչքի է ընկնում տեսակների մեծ բազմազանությամբ: Տարածքը բնակմիջավայր է այնպիսի հազվագյուտ տեսակների համար, ինչպիսիք են՝ առաջավորասիական ընձառյուծը, բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը, գորշ արջը, հնդկական մացառախոզը, հայկական իժը, անդրկովկասյան սահնօձը, երկարառտ սցինկը, ոսկեգույն մաբույան, սնագլուխ ռինխոկալամուսը և այլն:

<u>Հազվագյուտ բուսատեսակները</u>

Համաձայն հետազոտությունների և առկա գրականության տվյալների՝ տարածքի կենսաբազմազանությունում առկա են գեղատեսիլ և արժեքավոր բույսերի տեսակներ՝ Crocus speciosus M. Bieb., Tulipa julia K. Koch, Gladiolus kotschyanus Boiss., Orchis mascula (L.) L., Dactylorhiza flavescens (K. Koch) Holub, Ornithogalum balansae Boiss., Scilla armena Grossh

Զանգակածաղիկ հայկական (*Scilla armena Grossh*)

<u>Դեղաբույսերը</u>



Ֆլորայի բազմազանության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հիմնական դեղատու բույսերի

ցանկն ընդգրկում է շուրջ 100 բուսատեսակ: Դրանք պատկանում են 33 ընտանիքների, որոնցից տեսակներով առավել հարուստ են 4-ը՝ Asteraceae (17 տեսակ), Rosaceae (11 տեսակ), Apiaceae և Lamiaceae (8-ական տեսակ):
Եղերգ հասարակ (*Cichorium intybus L*)

2.6.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տարածաշրջանը, շնորհիվ աշխարհագրական դիրքի, ռելիեֆի կտրտվածության, լանջերի տարբեր դիրքադրության և ֆլորիստական պրովինցիաների փոխազդեցության, հայտնի է իր հարուստ լանդշաֆտային և կենսաբանական բազմազանությամբ: Այստեղ, ըստ բարձունքային գոտիականության, կարելի է հանդիպել տափաստանային, նոսրանտառային, անտառային, մարգագետնային լանդշաֆտային տիպեր՝ իրենց բնորոշ կենդանի և անկենդան եզակի բաղադրիչներով:

Լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության պահպանության նպատակով տարածաշրջանում ստեղծվել են բնության հատուկ պահպանվող մի շարք տարածքներ (ԲՀՊՏ):

Աղյուսակ 3. Ջերմուկ քաղաքի հարակից պետական արգելավայրեր

Անվանումը	Հիմնադրման տարեթիվը և որոշումը	Տարածքը, հա	Պահպանության օբյեկտները
Ջերմուկի ջրաբանական	1981թ.	18000.0	Հանքային ջրեր
Ջերմուկի անտառային	13.09.1998թ. ՀՍՍՀ ՄՍ որոշում №341	3865.0	Խոշորատերև կաղնու լեռնային անտառներ և հազվագյուտ կենդանիներ
Ալիճ/Ալագոլար	12.10.2001թ. ՀՀ կառավարության №976 որոշում	240.0	Հրաբխային ծագումով լճի ջրային պաշարներ

3. ՍՈՑԻԱԼ -ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

3.1. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

3.1.1. Ժողովրդագրություն/պատկերն ըստ 2013թ.

Քաղաքի բնակչության թիվը կազմում է 8431 մարդ, այդ թվում՝

- Կանայք՝ 4395
- Տղամարդիկ՝ 4036
- Բնակչության տարիքային կազմը /0-6՝232 մարդ, 7-17՝753 մարդ,18-65-ն ավելի՝ 7446 մարդ/
- Թոշակառուներ՝ 1050
- Փախստականներ՝ չկա
- Միակողմանի ծնողազուրկ երեխաներ՝ 51
- Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ՝ չկա
- Հայրենական պատերազմի մասնակիցներ՝ 3
- Հաշմանդամներ՝ 283
- Աշխատունակներ՝5413
- Աշխատանք ունեցողներ՝ 4178
- Գործազուրկներ՝ 356
- Ընտանիքների /ծխերի/ թիվը՝ 2500
- «Փարոս» ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ՝ 220
- Զոհվածների ընտանիքներ՝22
- Անօթևան ընտանիքներ՝ չկա

Համայնքում գործում է սոցիալական ծառայությունների տարածքային բաժինը, որտեղ գրանցված են 1050 թոշակառուներ: Նպաստառու ընտանիքների թիվը 220 է: Նրանց տրամադրվող օժանդակության չափը տարբեր է: Բազային ֆինանսավորումը 17 000 դրամ է, լրացուցիչ ֆինանսավորումը հասնում է 45 000-ի: Եթե ընտանիքում կա անչափահաս երեխա, յուրաքանչյուրի համար ստացվում է 6000 դրամ: Բազային ֆինանսավորման շեմը փոխվում է հանրապետության ֆինանսական փոփոխությունների հետ կապված:

3.1.2. Արտագաղթ

Ջերմուկը, լինելով առողջարանային քաղաք, ունի «սահող» բնակչություն, մասնավորապես արտագնա աշխատանքի մեկնողներ, ուսանողներ և հովեկներ:

3.2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի ավագանու կողմից ստեղծված Ջերմուկի զարգացման աջակցության հիմնադրամը սոցիալ-տնտեսական օժանդակություն է ցուցաբերում քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ ֆինանսավորելով դեղորայքային, բուժման, ուսման վարձի և այլ անհրաժեշտ կարիքները: Ֆինանսական օգնություն է ցուցաբերվում նաև կրթական-մշակութային հիմնարկներին՝ շախմատի դպրոցին՝ մրցաշարերի խրախուսական մրցանակներ, մարզադպրոցին՝ սաների հանրապետական մրցումների մասնակցության, հանրակրթական դպրոցներին՝ դասագրքերի արժեքների փոխհատուցման, արվեստի մանկական դպրոցներին՝ միջոցառումների կազմակերպման և այլ նպատակներով: Համայնքն ունի վերանորոգված և կահավորված նորաբաց հանդիսությունների սրահ, որը գործում է ավագանու կողմից սահմանված պայմաններին համապատասխան: Բացվել է «Ջերմուկի երիտասարդական կենտրոն» ՀՈԱԿ-ը: Նախկին գրադարանի տարածքը վերակառուցվել, կահավորվել և հատկացվել է այդ կենտրոնին: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժինը տեղակայված է բնակելի թաղամասի կենտրոնական հատվածում, վերանորոգված է, ունի անհրաժեշտ աշխատանքային ու տեխնիկական պայմաններ:

3.3. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏ

Քաղաք-առողջարանն այսօր հանգստացողներին ու զբոսաշրջիկներին է առաջարկում առողջարանների, հյուրանոցների, ըմպելասրահի, լողավազանների, մարզահրապարակների, հասարակական սննդի օբյեկտների, բարերի ու սրճարանների ծառայությունները: Այժմ Ջերմուկում գործում են բազմաթիվ առողջարաններ ու հյուրանոցներ, առևտրի կետեր:

1. «Արմենիա» առողջարան /«Արմենիա 2»

«Արմենիա» առողջարանային համալիրը համապատասխանում է միջազգային ամենաբարձր ստանդարտներին: Այստեղ 63°C թերմալ ջրերի օգտագործմամբ բուժման կուրս կարող են անցնել աղեստամոքսային համակարգի, լյարդի, միզապարկի, ենթաստամոքսային գեղձի, հենաշարժիչ համակարգի, գինեկոլոգիական, նյութափոխանակության խախտումների և նյարդային համակարգի հիվանդություններով տառապող այցելուները:

2. «Օլիմպիա» առողջարան
3. «Արարատ» մոր և մանկան առողջարան

4. «Ջերմուկ աշխարհ» առողջարան
5. «Թուրիս» առողջարան
6. «Նարեկ» առողջարան
7. «Գլաձոր» առողջարան /գործում է սեզոնային/
8. «Նաիրի» հյուրանոց
9. «Վերոնա» հյուրանոց
10. «Անուշ» հյուրանոց
11. «Անի» հյուրանոց
12. «Եվմարի» հյուրանոց
13. «Կասկադ» հյուրանոց
14. «Central» հյուրանոց

Մոտ ապագայում Ջերմուկում շահագործման կհանձնվեն մի շարք հյուրանոցներ և հյուրանոցային համալիրներ, որոնցից են աշխարհահռչակ «HYATT» բրենդի հյուրանոցը, որը շահագործման կհանձնվի մոտ ապագայում/, «Ջերմուկ Ռեզորտ» հյուրանոցային համալիրը, որը պետք է ունենա մոտավորապես 600 տեղ, և որի շինարարությունը մոտենում է ավարտին: Վերակառուցվում է նախկին «Ջերմուկ» հյուրանոցը, որը ԽՍՀՄ տարիներին եղել է ամենամեծ հյուրանոցներից մեկը: Ջերմուկը օրեցօր դառնում է ոչ միայն հայաստանցի զբոսաշրջիկների սիրելի վայր, այլև զբոսաշրջային արտաքին շուկայի կողմից նորովի բացահայտված շատ ավելի գրավիչ քաղաք-առողջարան, որտեղ շուտով կգործեն բազմաթիվ նոր և բարձրորակ հյուրանոցներ և հյուրանոցային համալիրներ:

Ջերմուկի ճոպանուղին կառուցվել է 2007թ. աշնանը ավստրիական Leitner կազմակերպության կողմից: Ճոպանուղու երկարությունը 1000 մ է: Ներքևի և վերևի հենասյուների միջև եղած բարձրության տարբերությունը 400մ է: Ամենաբարձր կետը գտնվում է 2480մ բարձրության վրա, որտեղ գործում է ռեստորան-սրճարան: ՈՒնի 2 սահուղի: Առաջինի երկարությունը 1450մ է, երկրորդինը՝ 1550մ: Տեղերի թիվը՝ 200: Ներքևում գործում են սահատախտակների և դահուկների վարձույթի կետ, նաև սրճարան և ավտոկայանման տարածք:

Համայնքում գործում են նաև սպասարկման այլ կետեր, մասնավորապես.

- Առևտրի փոքր, միջին և խոշոր օբյեկտներ-57
- Բենզինի լցակայաններ-2
- Գազի լիցքավորման կետ -1
- Հանրային սննդի օբյեկտներ-8, որից հինգը աշխատում են ողջ տարին:
- Բաղնիքներ /սաունաներ/-2

3.4. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԶԱՄԲՅՈՒՂ

Միջին աշխատավարձը ցածր է հանրապետական միջինից: Կենտրոնից ունեցած հեռավորության պատճառով և որպես առողջարանային քաղաք սպառողական զամբյուղն առավել բարձր է:

4. <u>ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</u>

4.1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքն իր բնույթով արդյունաբերական չէ: Այստեղ գործում են մի շարք կազմակերպություններ՝ «Ջերմուկ գրուպ» ՓԲԸ-ն, ձկնաբուծարան, ավազի հանքաքարի մշակման, պետնախակաղապարների արտադրամաս: Արփա գետի վրա կառուցված են երկու գործող հէկ, նախատեսված են ևս 5-ը:

«ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն հանքային և բնական աղբյուրի ջուր արտադրող խոշորագույն ընկերությունն է Հայաստանում: Ընկերությունը հիմնադրվել է 1999թ. Ջերմուկ քաղաքում Աշոտ Արսենյանի կողմից:

Այն նշանավորվեց Ջերմուկ քաղաքում հանքային ջրի արտադրության նոր գործարանի կառուցումով: Հատկանշական է այն փաստը, որ գործարանը կառուցվեց հանքային ջրի հորատանցքի վրա, որը գտնվում է մոտ 30 մետր խորության վրա: Շնորհիվ «Ջերմուկ գրուպ» ընկերության նախագահի կողմից անընդհատ կատարվող խոշոր ներդրումների՝ ընկերությունը առաջատար դիրք ձեռք բերեց շուկայում և ավելի քան մեկ տասնամյակ է՝ կարողանում է պահպանել իր դիրքերը, ինչին նպաստում են անընդհատ կատարվող ներդրումները, տեխնիկական համալրումները, բիզնեսի գործընթացների բարելավումները: Ներկայումս ընկերությունը շշալցում է «Ջերմուկ» և «Բյուրեղ» ապրանքային նշանով բնական աղբյուրի ջուր: Մեր ջրերի ճանապարհորդությունը սկսում է երկրի ընդերքից՝ բազալտի շերտերից՝ շրջակա միջավայրի աղտոտվածությունից շատ հեռու: Գալով երկրի ընդերքից՝ ընթացքում դրանք հարստանում են՝ ձեռք բերելով մեր օրգանիզմին անհրաժեշտ տարատեսակ առողջարար հանքային նյութեր: «Ջերմուկ գրուպ» ընկերության արտադրատեսակները ոչ միայն ընկերության, այլ և ամբողջ հայ ժողովրդի հպարտությունն են: «Ջերմուկ գրուպ»-ը

այնպիսի հայտնի կազմակերպությունների գործընկեր և ներկայացուցիչ է Հայաստանում ինչպիսիք են՝ PepsiCo, Carlsberg Group, Procter&Gamble և այլն: «Ջերմուկ գրուպ»–ի ջրերի բարձր որակի ապացույցն են եվրոպական, ամերիկյան և ԱՊՀ երկրների հեղինակավոր ցուցահանդեսներում ձեռք բերված բազմաթիվ մրցանակներն ու պատվոգրերը: «Ջերմուկ գրուպ»-ը միակ ընկերությունն է, որն ունի Եվրամիության վկայական: Վերջինս հնարավորություն է տալիս արտահանելու արտադրանքը Եվրամիության շատ երկրներ: Այսօր ««Ջերմուկ Գրուպ»-ի հանքային և բնական աղբյուրի ջրերն արտահանվում են Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան, Բելառուս, Ղազախստան, ԵՄ երկրներ, ԱՄՆ, Իսրայել և այլ երկրներ:

«Արևաձուկ» ՍՊԸ-ն ստեղծվել է 1998թ. Ջերմուկի Գնդեվանքի կիրճում: Կազմակերպությունն իրականացնում է ձկնամթերքի (թառափազգի և սաղմոնազգի ձկնատեսակների, մանրաձկան, մայրական կազմի, ձկնկիթի) արտադրություն, ձկնամթերքի մշակում և վաճառք:

Ձկնաբուծական տնտեսությունում սաղմոնազգի ձկնատեսակներից աճեցվում են գեղարքունի և ամառային բախտակ՝ Սևանա լճի պաշարները համալրելու նպատակով, և ապրանքային ձուկ՝ ծիածանափայլ իշխան:

Ձկնաբուծական նպատակներով օգտագործվում են Արփա գետի ջրերը: Ավազանների յուրահատուկ կառուցվածքը թույլ չի տալիս նստվածքի գոյացում և սնուցվելով գետի ու բնական լեռնային աղբյուրների ջրերով՝ նպաստում է ապրանքաձկան անթերի համի պահպանմանը: Տնտեսությունից դուրս հոսող ջուրը վերադարձվում է Արփա գետ՝ չնվազեցնելով վերջինիս սանիտարական հոսքը:

Տարեկան արտադրանքը կազմում է մոտ 500 հազար մանրաձուկ, որից 200.000-ը լցվում է Սևանա լիճ: Ծավալների ընդլայման պայմաններում կարող են արտադրել մինչև մեկ միլիոն մանրաձուկ: Ապրանքային ձկան առկա ծավալները կազմում են 15տ, որից 10տ՝ ծիածանափայլ իշխան, 5տ՝ կարմրախայտ և գեղարքունի իշխան, ծավալների մեծացման պայմաններում ձկնամթերքի արտադրությունը կկազմի 30տ:

Տնկարան: Ջերմուկ քաղաքի անտառային տարածքում նախկին անտառապետ Արարատ Սարգսյանի նախաձեռնությամբ 2006թ. հիմնվել է փշատերև ծառերի տնկարան:

Տնկարան ներմուծված սերմերի հիման վրա աճեցվում են արծաթափայլ եղևնի և սոճի: Տնկարանում առկա են մեծաքանակ տնկիներ, որոնք,

սակայն, շուկայի սահմանափակության պատճառով չեն սպառվում:

4.2. ՔԱՂԱՔԻ ԻՆՖՐԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.2.1. Ջրմուղ-կոյուղու համակարգ

Ջրամատակարարում

Ջերմուկ քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է հետևյալ աղբյուրներից.

- «Սպիտակ ջուր» աղբյուրներ, գտնվում են քաղաքից 3.7 կմ հյուսիս, ելքը՝ 83.0լ/վրկ,
- «Ջերմուկի խումբ» (650-656.914) աղբյուրներ, գտնվում են քաղաքի հյուսիս-արևմտյան լանջին՝ ըմպելասրահի մոտակայքում, ելքը՝ 17.0լ/վրկ,
- «Արենի» աղբյուրներ, ելքը՝ 15.0լ/վրկ,
- Կեղուտի աղբյուրներ, ելքը՝ 7.0լ/վրկ,
- Դարա-յուրտի աղբյուրներ, ելքը՝ 7.0լ/վրկ:

Աղբյուրների գումարային ելքը կազմում է 129.0լ/վրկ, որը միանգամայն բավարար է Ջերմուկ քաղաքի ջրապահանջն ապահովելու համար:

Ջերմուկում ներկայումս գործում են օրվա կարգավորման ջրամբարներ՝

- Ծավալը՝ 2x250մ^3, հատակի նիշը՝ 2180մ, սպասարկում է քաղաքի կենտրոնական մասը:
- Արենի ՕԿՋ, ծավալը՝ 1x100մ^3, սպասարկում է քաղաքի կենտրոնական մասը:
- Կեչուտի ՕԿՋ, ծավալը՝ 1x80մ^3 սպասարկում է Կեչուտ գյուղը:

Գոյություն ունեցող ջրամբարների ծավալը մեծ չէ, դրանք չեն ապահովում հակահրդեհային պաշարապահ ծավալներ:

Քաղաքային բաշխիչ ցանցը, որի երկարությունը կազմում է մոտ 26 կմ (ջրատարներ՝ 3.2 կմ, բաշխիչ ցանց՝ 22.7 կմ), 40-50 տարվա հնություն ունի, գտնվում է տեխնիկական վատ վիճակում, հոսակորուստները, ըստ պաշտոնական տվյալների, կազմում են 20%, սակայն իրական մեծությունը զգալիորեն ավելի է և չի հաշվարկվում ջրաչափական համակարգի բացակայության պատճառով: Բաշխիչ ցանցը գոտիավորված չէ: Հաշվարկային հեռանկարում ջրապահանջը կկազմի 73.84 լ/վրկ:

Խմելու մաքուր ջրով ապահովված չէ Կեչուտ գյուղը: Քաղաքի ջրամատակարարումը 24-ժամյա է:

Ջրահեռացում

Համայնքը կոյուղացված է 100%-ով: Կոյուղու հիմնական կոլեկտորը, անցնելով քաղաքի միջով հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, շրջանցում է Կեչուտի ջրամբարը և պատվարից հետո թափվում Արփա գետը: Քաղաքի տարբեր հատվածներում, որտեղ նիշերը ցածր են կոլեկտորից, կեղտաջրերը կոլեկտոր են տրվում պոմպերի օգնությամբ: Քաղաքի ձախակողմյան տարածքների կեղտաջրերը թափվում են տարածքով անցնող հիմնական կոլեկտորի մեջ: Որոշ տարածքների և առանձին շենքերի կենցաղային կեղտաջրերը թափվում են Արփա գետը Կեչուտի ջրամբարից առաջ՝ անմիջապես քաղաքի տարածքում:

Կոյուղու ցանցերը, որոնց երկարությունը կազմում է շուրջ 17.5 կմ, կառուցվել են հիմնականում ջրամատակարարման ցանցի հետ՝ 40-50 տարի առաջ, և ներկայումս գտնվում են տեխնիկապես վատ վիճակում: Կոյուղաջրերի արտահոսքը ցանցից կազմում է զգալի տոկոս: Կոլեկտորը վերակառուցելուց հետո հնարավորություն կստեղծվի վերացնելու Արփա գետի աղտոտումը:

Համայնքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի արդիականացման ուղղությամբ մշակվել ու հաստատվել են բազմաթիվ ծրագրեր: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի վարկային ծրագրի շրջանակներում Ջերմուկի ջրահեռացման աշխատանքները պատշաճ ձևով իրականացնելու համար 2014 թվականի ընթացքում Ջերմուկ քաղաքի վարչական տարածքում կառուցվել է կոյուղու մաքրման կայան: 2014թ. սկսված են նաև կոյուղագծերի հիմնանորոգման աշխատանքները՝ (16.8կմ 200մմ-400մմ տրամագծով խողովակներ, 9,7կմ կոլեկտորի երկարությունը): Անցումը դեպի մաքրման կայան կատարվում է երկու դյուկերների օգնությամբ: Վերանորոգման աշխատանքները կատարվում են Եվրոպական բանկի և Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ի միջոցով: Խմելու ջրի մեկ խորանարդի վճարը 155 դրամ է, կոյուղաջրի վճարը՝ 25 դրամ:

4.2.2. Աղբահանություն

«Բիգ Հոլդինգ» ՍՊԸ-ն պայմանագրային սկզբունքներով իրականացնում է քաղաքի սանիտարական մաքրում, կանաչապատում և աղբահանություն: Քաղաքի սահմաններում տեղադրված են 150 փոքր և միջին աղբարկղեր: Ունեն աղբահանություն իրականացնող երկու մեքենա: Աղբը տեղափոխվում է Ջիրակի աղբավայր, որը չի համապատասխանում պահանջվող նորմերին:

4.2.3. Հեռահաղորդակցություն

«Ռոստելեկոմ» ընկերության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Ջերմուկ քաղաքի բոլոր թաղամասերում այսուհետ գործում է անվճար wifi ինտերնետ ծառայությունը:

Հեռահաղորդակցությունն ապահովվում է «Վիվասել», «Օրանժ», «Բիլայն» ընկերությունների կողմից: Վերջին ընկերությունն ապահովում է ֆիքսված հեռախոսակապը:

4.2.4. Տրանսպորտ և տրանսպորտային ցանց

Երևանի հետ տրանսպորտային կապն իրականացվում է երկու ավտոմայրուղիներով, որոնցից Ջերմուկ-Երասխ-Երևան մայրուղին ավելի կարճ է և կազմում է շուրջ 175կմ: Քաղաքը Երևան-Գորիս-Ստեփանակերտ մայրուղուց գտնվում է 24 կմ հեռավորության վրա:

Ջերմուկի ճոպանուղին հատկապես գեղեցիկ է ջերմուկյան ձնառատ, փափուկ և արևոտ ձմռանը: Հարկ է նշել, որ արևոտ ու պայծառ օրերի քանակով քաղաքը նախկին միութենական առողջարանների մեջ զբաղեցնում էր առաջին տեղերից մեկը: Ձմեռային հանգստի, բուժման, մարզաձևերի համար բարենպաստ կլիմայական ու բնական պայմանների առկայությունը միշտ դեպի առողջարանային քաղաք է ձգել ձմեռային հանգստի սիրահարներին: Ջերմուկի ճոպանուղին կառուցվել է 2007թ աշնանը ավստրիական Leitner կազմակերպության կողմից: Տեղերի թիվը՝ 200: Ճոպանուղու երկարությունը 1000 մ է: Ներքևի և վերևի հենասյուների միջև եղած բարձրության տարբերությունը 400մ է: Ամենաբարձր կետը գտնվում է 2480մ բարձրության վրա, որտեղ գործում է ռեստորան-սրճարան: Ունի լեռնադահուկային 2 սահուղի: Առաջինի երկարությունը 1450մ է, երկրորդինը՝ 1550մ: Ներքևում գործում է սահատախտակների և դահուկների վարձույթի կետ, նաև սրճարան և ավտոկայանատեղի:

4.2.5. Էներգամատակարարում

Քաղաքը սնվում է «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի «Արաքս» մասնաճյուղից:

4.2.6. Գազամատակարարում

Քաղաքը 98 տոկոսով գազաֆիկացված է:

4.2.7. Առողջապահություն

Համայնքում գործում է «Ջերմուկ առողջարանային կենտրոն» ՓԲԸ-ն: Կենտրոնն ընդգրկում է պոլիկլինիկան և հիվանդանոցը: Ընդհանուր աշխատակազմը բաղկացած է 35 անդամներից, որոնցից բժիշկներ են 5-ը, 2՝ թերապևտ, 1՝ գինեկոլոգ, 1՝ լաբորատոր բժիշկ և 1՝ սոնոգրաֆիստ: Առկա է մասնագիտական կադրերի պակաս:

Գեոթիմը հիվանդանոցին է տրամադրել մեկ ավտոմեքենա: Համայնքի սանիտարական հարցերով է զբաղվում հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի Ջերմուկի մասնաճյուղը: Սանիտարական առումով քաղաքը շատ մաքուր է: Համաճարակների դեպքեր գրանցված չեն: 2013թ. գրանցվել են միայն բուտուլիզմի դեպքեր:

4.2.8. Կրթություն և մշակույթ

Քաղաքի մշակութային կյանքը: Տուրիզմ

Ջերմուկն իր ակտիվ մասնակցությունն ունի շախմատային բազմաթիվ առաջնությունների ու հուշամրցաշարերի անցկացման գործում, որոնցից մի քանիսը դարձել են բարի ավանդույթ: 2006 թվականից սկսած՝ Ջերմուկում են անցկացվում շախմատի միջազգային պատանեկան մրցաշարերը: 2007 թվականից սկսած՝ Ջերմուկում անցկացվում են մի շարք միջազգային մրցաշարեր և առաջնություններ, այդ թվում նաև Կարեն Ասրյանի անվան միջազգային հուշամրցաշարը: 2008թ. անցկացվել է տղամարդկանց «Գրանդ պրի» մրցաշարը, երկու անգամ՝ կանանց մրցաշար: Շախմատի դպրոցը գործում է 2005թ. առ այսօր: 2008թ. միջազգային մրցաշարի հաղթող է ճանաչվել Անի Թադևոսյանը: Քաղաքը չունի մարզական համալիր: 2012թ. ի վեր Ջերմուկում անցկացվում է ամենամյա «Ձնեմարդուկ» փառատոնը: Ջերմուկում գործում է Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղը, որը հիմնադրվել է 1973թ.: Ցուցադրվում են կերպարվեստի հայ վարպետների (Մարտիրոս Սարյան, Արա Սարգսյան, Սարգիս Մուրադյան, Արա Հարությունյան, Կալենց ամուսիններ, Հակոբ Հակոբյան, Ռուդոլֆ Խաչատրյան և այլոք) գեղանկարչական, գրաֆիկական և քանդակագործական աշխատանքները: Պարբերաբար փոփոխվում են ցուցանմուշները, և կազմակերպվում են անհատական ցուցահանդեսներ: Հասցեն՝ ք. Ջերմուկ, Չարենցի 1 - «Թուրիս» առողջարանի հարևանությամբ:

Քանդակագործ Հովհաննես Մուրադյանի ձեռքով կյանքի է կոչվել (դեռևս 1974թ.) Արաբոյի, Հրայր Դժոխքի, Աղբյուր Սերոբի, Սոսեի, Նիկոլ Դումանի, Մորուք Կարոյի, Գևորգ Չաուշի, Քեռու, Մախլուտոյի մարմարե քանդակների շարքը, որին հաջորդեցին 10 բազալտե հսկա ստեղծագործությունները՝ իրենց հերոսական շնչով

լցնելով Ջերմուկի գեղատեսիլ վայրերից մեկը՝ այժմ Ֆերդինանդ Ղազարյանի անվան ճեմուղին:

2012թ. ARM TOURISM ինտերնետային ամսագրի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպված ARM TOURISM AWARDS ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ Ջերմուկ քաղաքը «Առողջարանային տուրիզմը զարգացնելու համար» անվանակարգում ճանաչվել է լավագույնը: 2014թ. «Տուրիստական Հայաստան» մրցանակաբաշխության ընթացքում տարվա լավագույն առողջարան է ճանաչվել «Արմենիա» առողջարանային համալիրը:

Կրթություն

Աղյուսակ 4. Քաղաքի Կրթական հաստատությունների ցանկ

	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվը	Մակերես, քառ. մ
1.	Թիվ 1 հիմն. դպրոց	Շահումյան 7	1960	2109
2.	Թիվ 2 ավագ դպրոց	Զախափնյակ	1970	4500
3.	Թիվ 3 հիմն. դպրոց	Կեչուտ գյուղ	1975	2500
4.	Ջերմուկ քաղաքի արվեստի հ.1 դպրոց ՀՈԱԿ	Մյասնիկյան 6	1950 /1969/	384
5.	Ջերմուկ քաղաքի արվեստի հ.2 դպրոց ՀՈԱԿ	Զախափնյակ	1981	470
6.	Մանկապատանեկան մարզադպրոց	Ազատամարտիկների 16	1989	150
7.	Կ. Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց	Շահումյան 7/1	2008	270
8.	Ջերմուկի կենտրոնական գրադարան	Վարդանյան 1	1960	100
9.	Պատկերասրահ	Չարենցի 1	1949/1973/	480
10.	ՍՕՏԲ	Զախափնյակ	1981	40
11.	Ջերմուկ քաղաքային համայնքի «ՋԱՏԻԿ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ	Զախափնյակ	1981	

Ջերմուկում կան երկու հիմնական և մեկ ավագ դպրոցներ, արվեստի երկու մանկական դպրոց, մարզադպրոց, որտեղ գործում են բռնցքամարտի, ծանրամարտի, քիքբոքսինգի խմբակներ, շախմատի դպրոց, մանկապարտեզ և կենտրոնական գրադարան: Ջերմուկում գործում են 2 հիմնական և 1 ավագ դպրոց և 1 նախակրթարան: Ջերմուկի ավագ դպրոցին որպես նվեր հատկացվել է էլեկտրոնային գրատախտակ՝ ուսուցումն արդի պահանջներին համապատասխան կազմակերպելու համար, նաև թիվ 1 և թիվ 2: Հիմնանորոգվել է արվեստի թիվ 2 դպրոցը: Սակայն այն հագեցած չէ երաժշտական գործիքներով, անհրաժեշտ ժամանակակից գույքով, թեպետ երեխաները գեղագիտական դաստիարակություն են ստանում բարեկեցիկ պայմաններում: Քաղաքում են գտնվում նաև արվեստի դպրոցները (ՀՈԱԿ-ները), Կարեն Ասրյանի անվան շախմատի դպրոց ՀՈԱԿ-ը, Ջերմուկի մանկապատանեկան մարզադպրոցը (ՄՊՄԴ) և Ջերմուկի «Ջատիկ»

մանկապարտեզը (բնակչության պահանջարկին ընդառաջ՝ համայնքի «Զատիկ» մանկապարտեզում վերանորոգվել, կահավորվել ու բացվել են լրացուցիչ 6 խմբեր):

Թիվ 2 արվեստի դպրոց: Դպրոցը հիմնադրվել է 1981թ. սեպտեմբերին, որպես Ջերմուկի արվեստի դպրոցի Ձախափնյակի մասնաճյուղ: 1995թ. օգոստոսի 26-ից առանձնացվել է Ջերմուկի արվեստի դպրոցից և կոչվել համար 2 արվեստի դպրոց: Դպրոցը գործում է կանոնադրության և մշակույթի նախարարության ծրագրի համաձայն: 1981թ.-ից մինչև 1997թ. օգոստոս ամիսը դպրոցը գտնվում էր բնակելի շենքի 1-ին հարկի 2 մուտքերում և չէր բավարարում ուսման անհրաժեշտ պայմաններին: 1997թ. օգոստոս ամսից դպրոցին տրամադրվեց նոր տարածք /մանկապարտեզի մասնաճյուղերից մեկը/, կատարվեց կոսմետիկ վերանորոգում, որը նույնպես բավարար համարել չէր կարելի: Վերջապես 2013թ. հունիսից «Գեոթիմ» ՓԲԸ-ի կողմից շատ կարճ ժամանակամիջոցում դպրոցը վերանորոգվեց և բացվեց հանդիսավոր պայմաններում: Բացմանը ներկա էին փոխվարչապետը, «Գեոթիմ» ՓԲԸ-ի ղեկավարությունը, քաղաքապետը և Ջերմուկի այլ կազմակերպությունների ղեկավարներ և աշխատողներ (2013թ. նոյեմբեր): Դպրոցում գործում են արվեստի տարբեր խմբակներ՝ երաժշտական (դաշնամուր, ջութակ, կիթառ, շվի, դուդուկ, քանոն, ակորդեոն, դհոլ), պարարվեստ, դասական, ժողովրդական, ազգագրական, ժամանակակից երգի խմբեր, կերպարվեստ, նկարչություն, ծեփագործություն, գծանկար, գունանկար, փորագրություն, ասեղնագործություն: Համաձայն Ջերմուկի ավագանու որոշման՝ դպրոցում սովորող միակողմանի և երկկողմ ծնողազուրկ, նպաստառու, վիրավոր ազատամարտիկների երեխաներն օգտվում են ուսման վարձի զեղչերից: Պետպատվերի շրջանակներում սովորում են 9 աշակերտներ: Դպրոցը բազմիցս մասնակցել է ինչպես քաղաքային, այնպես էլ մարզային և հանրապետական տարբեր մրցույթ-փառատոների և ստացել տարբեր մրցանակներ ու պատվոգրեր (2014թ. «ՆԱԶԱՆՔ-2014» պարի հանրապետական մրցույթ-փառատոնում արժանացել է 2-րդ պատվավոր տեղին՝ստանալով դիպլոմ, մեդալ և հուշանվեր): Դպրոցն ունի թվով 25 աշխատակից, որոնցից 20-ը դասատուներ են: Աշակերտների ընդհանուր թիվն այսօր 180-ն է:

«Հայ Ասպետներ» հեռուստախաղի եթերաշրջաններից մեկի հաղթող է դարձել Ջերմուկի №1 դպրոցի յոթ հոգուց բաղկացած թիմը, որի անդամները ստացել են մեկական նոութբուք և պայուսակ: Հայաստանի նախագահն անձամբ է շնորհավորել պատանի ինտելեկտուալներին: Բացի նվերներից հաղթողները «Հայ ասպետ»

հեռուստախաղի կազմակերպիչների հետ մեկնել են ճանաչողական ճամփորդության Արևմտյան Հայաստանի պատմական վայրերով՝ (Կարս, Վան, Մուշ ու Կարին):

Մանկապարտեզներ: Այդչափ գեղեցիկ և հարուստ քաղաքում շատ անմխիթար ու անբարեկարգ վիճակում էին գտնվում տեղի մանկապարտեզները: Համայնքի զարգացման ծրագրով նախատեսված էր 2007թ. վերանորոգել և վերաբացել Կեչուտ գյուղի մանկապարտեզը, իսկ 2009թ.՝ Զախափնյակ թաղամասի մանկապարտեզը, մանկապարտեզները վերաբացելուց հետո միավորվեցին և վերանվանվեցին՝ «Զատիկ»: 2013թ. օգոստոսի 1-ից «Գեոթիմ» ՓԲԸ-ի աջակցությամբ կառուցվեց և 2013թ. նոյեմբերի 6-ին ավարտին հասցվեց մանկապարտեզի 2-րդ մասնաշենքը, իսկ «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակը մասնաշենքին տրամադրեց գույք և դիդակտիկ պարագաներ: 2014թ. հունվարից մանկապարտեզի 2-րդ մասնաշենքում բացվեց ևս 2 խումբ (նախակրթարան): Այժմ «Զատիկ» մանկապարտեզն ունի 140 սան և 29 աշխատակից: Մանկապարտեզն ունի խաղասենյակներ՝ հագեցած համապատասխան գույքով և տեխնիկայով, միջոցառումների կազմակերպման և անցկացման համար նախատեսված գեղեցիկ դահլիճ՝ ապահովված երաժշտադիդակտիկ պարագաներով: Մանկապարտեզի բակում կառուցվել է նաև խաղահրապարակ՝ սպորտային խաղերի անցկացման համար:

Ջերմուկի գրադարան. այն քաղաքում սկսել է գործել 1954 թվականից, գտնվում էր հանքային ջրերի մայր գործարանի տարածքում կառուցված երկհարկանի շինության առաջին հարկում: Մինչև 2010 թվականի վերջ Ջերմուկում գործել է երեք գրադարան՝ Աջափնյակում, Զախափնյակում և Կեչուտ գյուղում: Թե՛ Աջափնյակի և թե՛ Զախափնյակի գրադարանները գործում էին բնակելի շենքերի առաջին հարկերի հարմարեցված տարածքներում: Կեչուտի գրադարանը տեղավորված էր մշակույթի տան երկրորդ հարկում: Երեք գրադարաններում էլ շենքային պայմանները թույլ չէին տալիս իրականացնել քաղաքացիների պատշաճ սպասարկում: Ոչ միայն շենքային անհամապատասխան պայմանները, այլ նաև ընթերցողների թվի աստիճանական նվազումը անհեռանկար էին դարձնում Աջափնյակում և Կեչուտում գրադարան ունենալը: Համայնքի մշակութային հարստությունը կազմող գրադարանային հավաքածուն վերջնական ոչնչացումից փրկելու և ի նպաստ բնակչության՝ արդյունավետ օգտագործելու մտահոգությամբ էլ ծրագրվեց հատկացնել նոր շենքային պայմաններ՝ վերին հարկերի օգտագործողներից ազատ ու անվտանգ: Զախափնյակի մանկապարտեզի չօգտագործվող հատվածը վերակառուցելու և որպես գրադարան օգտագործելու նպատակով համայնքի ղեկավարի միջնորդությամբ պետական բյուջեից տրամադրվեց ֆինանսական օգնություն, և իրականացվեց նոր գրադարանի

ստեղծումը: Այն ունի ընթերցասրահ և գրապահոց, բավարար ջեռուցման համակարգ, կահավորված է հարմարավետ կահույքով, համակարգչային տեխնիկայով, ապահովված է ինտերնետ կապով: Արդեն գրադարանի կայքէջում տեղադրված են նաև գրականության ամբողջ հավաքածուի ցուցակները, և այն հասանելի է ցանկացած ընթերցասերի: Բավական է այցելել http://jermuk-gradaran.info/: Աշխատանքը գերազույն ջանքերով իրականացրել են գրադարանի երեք աշխատակիցները՝ զուգահեռաբար բարեխղճորեն կատարելով նաև սպասարկման, գրքերի վերանորոգման, հաշվառման, վերադասավորման աշխատանքները: Վերջին երեք տարվա ընթացքում ինչպես տեղական բյուջեից հատկացված գումարներով, այնպես էլ նվիրատվություններով ստացվել են նոր գրքեր, որոնց ցուցակները դարձյալ տեղադրվել են կայքում: Համացանցի ընձեռած հնարավորությունների առկայության պայմաններում գրադարանից օգտվողների թիվն աճել է գրեթե երեսուն տոկոսով: Նրանցից կրտսերը յոթ տարեկան է, ավագը՝ յոթանասունհինգ: Առաջիկայում աշխատանքներ կտարվեն գրականության թեմատիկ ցանկերի կազմման և հրապարակման ուղղությամբ:

4.2.9. ՀՀ ԱՀՆ փրկարարական ծառայություն



ՀՀ ԱՀՆ փրկարար ծառայություն Վայոց Ձորի մարզային փրկարարական վարչություն: Ջերմուկի հրշեջ փրկարարական ջոկատում աշխատում է 34 մարդ, որոնցից 2-ը՝ սպա, 1-ը՝ տեխնիկական սպասարկող, մնացածը՝ հրշեջ փրկարարներ: Նրանց տրամադրության տակ է գտնվում 3 միավոր տեխնիկա: Կազմակերպությունը չունի ջրի օգտագործման կանոնավոր աղբյուր: Հիդրանտները ջրազրկված են: Առկա է ջրավազան՝ 30 մ³ ծավալով, որը գտնվում է վթարային վիճակում: Ավազանի վերականգնման համար պահանջվում է մոտ 1մլն դրամ: Ձմռանը հաճախակի են բնակարանային հրդեհները: 2014թ. գրանցվել է հրդեհի 24 դեպք: Հրդեհավտանգ իրավիճակներ են ստեղծվում նաև էլեկտրահաղորդալարերի ոչ ճիշտ անցկացման պատճառով անտառային հրդեհներ 2014թ. չեն գրանցվել:

4.2.10. Ոչ կառավարական և հասարակական կազմակերպություններ

Համայնքում գործող ոչ կառավարական կազմակերպություններն են:

«Ջերմուկի երիտասարդական կենտրոն» ՀՈԱԿ-ը հիմնադրվել է 2013թ. հուլիսի 9-ին Ջերմուկի ՏԻՄ-ի կողմից: Կազմակերպությունը զբաղվում է համայնքում երիտասարդական, սոցիալական, առողջապահական, կրթական, մշակութային,

մարզական, բնապահպանական, հասարակական, ինչպես նաև համայնքային նշանակություն ունեցող ծրագրերի, միջոցառումների և նախաձեռնությունների իրականացմամբ: 2014թ. գարնանը կենտրոնի կամավորների նախաձեռնությամբ իրականացվել է ծառատունկ Ջերմուկի Ս. Գայանե եկեղեցու շրջակայքում: 2014թ. ամռանը Կենտրոնն իրականացրել է «Ուրախ ամառ» ծրագիրը՝ բնապահպանական դասընթացների կազմակերպմամբ:

«Ջերմուկի զարգացման կենտրոն» ՀԿ-ն գրանցվել է 2012թ. մայիսի 17-ին՝ նպատակ ունենալով ներկայացնել Ամուլսարի ոսկու հանքի շահագործման հետ կապված մտահոգություններ ունեցող բնակչության շահերը: «Ջերմուկի զարգացման կենտրոն» ՀԿ-ի գործունեության հիմնական ուղղություններն են՝ բնապահպանություն, համայնքների համաչափ զարգացում և զբոսաշրջություն: Բնապահպանական ակտիվ գործունեության իրականացման հետ մեկտեղ հասարակական կազմակերպությունն աջակցում է Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից նախատեսվող համայնքների խոշորացման գործընթացին: «Ջերմուկի զարգացման կենտրոն»-ը, քաղաքացիական հանրության ձևավորման տեսլականն ունենալով, աջակցում է նաև տեղական նախաձեռնություններին ողջ Վայոց Ձորի մարզում:

4.2.11. Ջանգվածային լրատվամիջոցներ

Ջանգվածային լրատվամիջոցներից թերթեր գրեթե չկան: Քաղաքում գործում է Հ1-ի ազատ գոտու լրագրողը:

5. ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

5.1. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՈՐԱԿ

Որպես բացառիկ մաքուր օդ ունեցող քաղաք՝ Ջերմուկն իր համբավը ձեռք է բերել դեռ խորհրդային տարիներից այնտեղ աճող մշտադալար ծառատեսակների /եղևնիներ, սոճի, տուա/ շնորհիվ, որոնք ոչ միայն ապահովում են քաղաքի մաքուր օդը, այլև զարդարում են ողջ քաղաքը՝ մշտապես կանաչ և թարմ տեսք հաղորդելով նրան:

5.2. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ

Գետային հոսքը ձևավորվում է ձնհալքի, անձրևների և ստորերկրյա ջրերի հաշվին: Գետային ընդհանուր հոսքի ձևավորման գործում ստորերկրյա բաղադրիչը կարգավորող դեր է կատարում՝ ապահովելով նրանց ջրով ձմռան և ամռան

սակավաջուր ժամանակահատվածում, երբ մակերեսային սնուցումը լրիվ դադարում է: Արփա գետի ստորգետնյա սնուցումը կազմում է 53 %, մակերևութայինը՝ 43:

Աղյուսակ 5. Ստորերկրյա ջրերում քիմիական տարրերի տատանման սահմանները

	Քիմիական տարրեր և ցուցանիշներ								
	O2	Cl	SO4	SiO2	NH4	NO2	NO3	Չոր մնացորդ	Ընդհ./կոշտ մգ-էկվ/լ
Արփա գետի ավազան	-	7.2-8.7	14-128	8-74	8-32	0.2-0.7	0.01	0.5	102-710

5.2.1.Ջրերում ծանր մետաղների պարունակությունները

2013թ. Արփա, Եղեգիս գետերից և Կեչուտի ջրամբարից վերցված փորձանմուշներում հաճախակի գերազանցվել են ԹԿՊ$_5$-ի, ալյումինի, վանադիումի, մանգանի և պղնձի սահմանային թույլատրելի նորմերը:

Կեչուտի ջրամբարում 2013թ. ալյումինի սահմանային թույլատրելի արժեքները գերազանցվել են 1.8 անգամ, վանադիումինը՝ 4.4, մանգանինը՝ 1.5 և պղնձինը՝ 1.3 անգամ:

Արփա գետի ավազանից վերցված փորձանմուշներում ալյումինի թույլատրելի նորման գերազանցվել է 1.3-7.8 անգամ, վանադիումինը՝ 2.0-4.0 անգամ:

Որոշված մյուս ցուցանիշների պարունակությունները եղել են թույլատրելի նորմաների սահմաններում:

5.2.2. Խմելու ջուր և ոռոգման համակարգ

Խմելու ջրամատակարարման խողովակաշարը անմխիթար վիճակում է: Խողովակաշարի 80 տոկոսը ենթակա է վերանորոգման, որից 60 տոկոսը կիրականացվի 2014թ.:

5.3. ԿՈՇՏ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ (ԿԿԹ) ԱՆԲԱՎԱՐԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Քաղաքապետարանի համար առաջնահերթ խնդիր է քաղաքի ամենօրյա աղբահանության ու սանմաքրման աշխատանքի կազմակերպումը: Տեղադրվել են նոր աղբարկղեր, նստարաններ: Վերջին տարիներին՝ զբոսաշրջության ակտիվ սեզոնին, համապատասխան տեխնիկայով կատարվում է քաղաքի կենտրոնական փողոցների և մայթերի մաքրում ու լվացում:

5.3.1.Արդյունաբերական թափոններ

Արտադրական թափոններ չկան: Սակայն առաջիկա տարիներին Հանքավայրի շահագործման դեպքում համայնքի մերձակայքում կհայտնվեն դատարկ ապարների կույտեր:

5.4. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳ

Քաղաքի մերձակայքում հայտնաբերվել են անհետացման վտանգի տակ գտնվող մի շարք բույսեր և կենդանիներ: Սակայն գործող կազմակերպությունները, մասնավորապես Գեոթիմը, միջոցներ է ձեռք առել նրանց պահպանության ուղղությամբ: Մասնավորապես Արշակ լեռնագագաթին բուսատեսակների պահպանությունն ապահովելու համար տարածքը սահմանազատված է, և տեղադրված են նախազգուշացնող նշաններ:

5.5. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Քաղաքում բնակիչների հիվանդացության պատկերը չի տարբերվում հանրապետության ընդհանուր վիճակից: Տեղանքի բարձրության պատճառով աճի միտում ունեն սիրտ-անոթային հիվանդությունները, հիվանդների թիվը՝ 112, հիպերտոնիկ հիվանդների թիվը՝ 208: Հիվանդություններից առավել հաճախ հանդիպում են դիաբետը, խպիպը, նորագոյացությունները: Գրանցված է դիաբետի 108 դեպք, որոնցից 3-ը՝ երեխաների մոտ, 9-ը պերիստատիկ հիվանդ, որից 4-ը՝ երեխաներ, գրանցված է 8 տուբերկուլյոզի դեպք, 10 օնկո հիվանդություն:

Համայնքում գործում է <u>Սոցիալական ծառայությունների տարածքային բաժինը</u>, որտեղ գրանցված են 1050 թոշակառուներ: Նպաստառու ընտանիքների թիվը 220 է: Նրանց տրամադրվող օժանդակության չափը տարբեր է: Բազային ֆինանսավորումը 17 000 դրամ է, լրացուցիչ ֆինանսավորումը հասնում է 45 000-ի: Եթե ընտանիքում կա անչափահաս երեխա, յուրաքանչյուրի համար ստացվում է 6000 դրամ: Բազային ֆինանսավորման շեմը փոխվում է հանրապետության ֆինանսական փոփոխությունների հետ կապված:

<u>Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի Ջերմուկի մասնաճյուղ</u>: Սանիտարական առումով քաղաքը շատ մաքուր է: Համաճարակների դեպքեր չեն գրանցվել: 2013թ. գրանցվել են միայն բուտուլիզմի դեպքեր: Այսպիսով, Ջերմուկ քաղաքի իրավիճակի վերլուծության փաստաթղթի օգնությամբ վեր հանվեցին հետևյալ բնապահպանական հիմնախնդիրները.

- ✓ *Կանաչ տարածքների սահմանափակություն և քաղաքի բարեկարգման անհրաժեշտություն*

- ✓ *Թափոնների ոչ արդյունավետ կառավարում*
- ✓ *Մակերևութային ջրերի դեգրադացիա*
- ✓ *Բնապահպանական կրթության և իրազեկության ցածր մակարդակ*

Հիմնախնդիրների ծագման պատճառահետևանքային կապերը ներկայացված են հիմնախնդիրների ծառերի տեսքով, որոնք բերված են ստորև:


Բնակչության կենսամակարդակի անկում
Ջրային ռեսուրսների աղտոտում
Տուրիզմի հնարավորությունների սահմանափակում
Քաղաքի անհամաչափ զարգացում
Կենսաբազ-մազանության կրճատում
Մթնոլորտային օդի աղտոտում
Հողերի դեգրադացիա
Հիվանդու-թյունների թվի աճ
Կանաչ տարածքների աղտոտում
Կոշտ կենցաղային թափոնների ոչ արդյունավետ կառավարում
Քաղաքապետարանում կոմունալ բաժնի բացակայություն
Աղբի վերամշակման հնարավորությունների բացակայություն
Աղբավայրի ծավալների սահմանափակություն և անհամապատասխանություն պահանջվող նորմերին
Շինարարական նոր աղբավայրի անհրաժեշտություն
Սեպտիկ հորի բացակայություն
Առանձնացված աղբահանության բացակայություն
Աղբավայրի ցանկապատի բացակայություն
Կանաչ տարածքների աղտոտում
Քաղաքաշինության զարգացում
Սպանդանոցի բացակայություն
Աղբահանություն իրականացնող մեքենաների մաշվածություն
Համապատասխան աղբամանների բացակայություն
Ջրոսաշրջիկների և հովեկների մեծ հոսք
Դատարկ ապարների լցակույտեր համայնքի մերձակայքում
Հանքարդյունա-բերության զարգացում
Օրենսդրական դաշտի անկատարություն
Ֆինանսական միջոցների սահմանափակություն
Բնապահպանական կրթության և դաստիարակության ցածր մակարդակ


Կենսամակարդակի աճ
Բարելավված ջրային ռեսուրսներ
Տուրիզմի հնարավորությունների ընդլայնում
Քաղաքի համաչափ զարգացում
Կենսաբազմա-զանության վերականգնում
Մաքուր շրջակա միջավայր
Բարելավված հողատեսքեր
Հիվանդու-թյունների կրճատում
Մաքուր կանաչ տարածքներ
Թափոնների արդյունավետ կառավարում
Համայնքապետա րանում կոմունալ բաժնի ստեղծում
Աղբի վերամշակման հնարավորությունների ստեղծում
Հին աղբավայրի ցանկապատում և ռեկուլտիվացիա
Նոր աղբավայրի ստեղծում
Նոր շինարարական աղբավայրի ստեղծում
Սեպտիկ հորի կառուցում
Առանձնացված աղբահանության կազմակերպում
Տեսակավորած աղբի օգտագործում որպես երկրորդային հումք
Կանաչ տարածքների մաքրում և հսկողության ուժեղացում
Քաղաքաշինու-թյան զարգացում
Սպանդանոցի ստեղծում
Աղբահանություն իրականացնող մեքենաների նորոգում և ժամանակակից տեխնիկայի ձեռք բերում
Համապատասխան աղբամանների տեղադրում
Զբոսաշրջիկների և հովեկների մեծ հոսք
Դատարկ ապարների լցակույտերի կառավարում
Հանքարդյունաբերու-թյան միջոցների օգտագործում համայնքի զարգացման համար
Օրենսդրական դաշտի բարելավում
Ֆինանսական միջոցների ձեռք բերում
Բնապահպանական կրթություն և դաստիարակություն


Բնակչության կենսամակարդակի անկում
Տուրիզմի հնարավորությունների սահմանափակում
Քաղաքի անհամաչափ զարգացում
Կենսաբազ-մազանության կրճատում
Համայնքի սահմաններում գտնվող բնական ռեսուրսների սպառում
Մթնոլորտային օդի աղտոտում
Կանաչ տարածքների սահմանափակություն և քաղաքի բարեկարգման անհրաժեշտություն
ՀԷԿ-երի կողմից չվերահսկվող ջրառ
Քաղաքաշինության զարգացում
Ոռոգման համակարգի բացակայություն
Հանքարդյունաբերության զարգացում
Կանաչ տարածքների աղտոտում
Կանաչապատ տարածքների կրճատում
Քաղաքապետարանում կանաչապատման բաժնի և մասնագետների բացակայություն
Ծառատունկի բացակայություն
Հողերի ապօրինի մշակում
Բնական աղետներ՝ անտառային հրդեհներ, երաշտ
Անասունների գերարածեցում
Անօրինական ծառահատումներ
Կանաչապատ տարածքների ոչ ճիշտ կառավարում
Հիդրանտների և վթարային ավազանի բացակայություն
Հողերի դեգրադացիա
Օրենսդրական դաշտի անկատարություն
Ֆինանսական միջոցների սահմանափակություն
Բնապահպանական կրթության և դաստիարակության ցածր մակարդակ


Կենսամակարդակի աճ
Տուրիզմի հնարավորությունների ընդլայնում
Քաղաքի համաչափ զարգացում
Կենսաբազմա-զանության վերականգնում
Մթնոլորտային օդի որակի բարելավում
Համայնքի բնական ռեսուրսների վերականգնում
Բերքատվության աճ
Հողերի վերա կանգնում
Ընդլայնված կանաչ տարածքներ և բարեկարգ քաղաք
Ոռոգման համակարգի վերանորոգում
Ոռոգման համակարգի կառուցում
Քաղաքապետարանում կանաչապատման բաժնի և մասնագետների ներգրավում
Քաղաքի ձախափնյա հատվածի զարգացում
Հանրային տնկարանի հիմնում
Կանաչապատ տարածքների մասնագիտական խնամք
Տարածքների կանաչապատում
Հանքարդյունաբերության հետևանքների վերացում
Ոռոգման ենթակա հողերի հաշվառում և կանաչապատում, մշակում
Անասունների արածեցման կարգավորում
Կանաչ տարածքների մաքրում
ՀԷԿ-երի կողմից ջրառի հսկողություն
Անտառային հրդեհների կանխում
Պայքար անօրինական ծառահատումների դեմ
Համայնքապետարանում բնապահպանության և գյուղատնտեսության բաժնի ստեղծում
Հիդրանտների առկայություն, հրշեջ վթարային ավազանի վերակառուցում
Ձախափնյակում լողավազանների ստեղծում
Օրենսդրական դաշտի կատարելագործում
Ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ընդլայնում
Բնապահպանական կրթություն և դաստիարակություն


Բնակչության կենսամակարդակի անկում
Ռեկրեացիոն ռեսուրսների կրճատում, հանքային ջրերի
Տուրիզմի հնարավորությունների սահմանափակում
Կենսաբազմազանության կրճատում
Հողերի դեգրադացիա, բերրի հողաշերտի կորուստ
Բերքատվության անկում
Կանաչ տարածքների սահմանափակում
Առողջապահակա և խնդիրներ
Կանաչ տարածքների աղտոտում
Ոռոգվող հողատեսքերի կրճատում
Մակերևութային հոսքերի դեգրադացիա
Հանքարդյունա-բերության զարգացում
Ջրահեռացման համակարգի բացակայություն: Կենցաղային հոսքաջրերի արտահոսք դեպի գետեր
Հեղեղատարների և անձրևաջրերի հեռացման և մաքրման համակարգի բացակայություն
Աղբավայրը մեկուսացնող ցանկապատի
Անտառային տարածքների կրճատում
Ոռոգման ջրերի աղտոտում
Ջրային ռեսուրսների հաշվառման անկատարություն
Ջրային ռեսուրսների սպառողական օգտագործում
Քաղաքի մերձակայքում աղբի կուտակումների առկայություն
ՓՀԷԿ-երի կողմից ջրառի նորմերի խախտում
Էկոլոգիական թողքերի անհամապատասխանություն միջազգային նորմերին
Ոռոգման համակարգի մաշվածություն
Բնապահպանական տեսչության կողմից թերի հսկողություն
Շինարարական աղբի ոչ ճիշտ կառավարում
Օրենսդրական դաշտի անկատարություն
Ֆինանսական միջոցների սահմանափակություն
Բնապահպանական կրթության և դաստիարակության ցածր մակարդակ


Բնակչության կենսամակարդակի անկում
Կանաչ տարածքների ընդլայնում
Մաքուր շրջակա միջավայր
Առողջ բնակչություն
Կենսաբազմազանության վերականգնում
Բարձրորակ գյուղմթերք
Բերքատվության աճ
Ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործում, հանքային ջրերի որակի ապահովում
Տուրիզմի հնարավորությունների ընդլայնում
Հողերի կայուն օգտագործում
Ոռոգվող հողատեսքերի ընդլայնում
Բարելավված մակերևութային հոսքեր
Քաղաքի մերձակայքում աղբի կուտակումների վերացում
Մեկուսացված, ցանկապատված աղբավայր
Փիէկ-երի կողմից ջրառի կարգավորում
Անտառային տարածքների վերականգնում
Ոռոգման ջրերի աղտոտման աղբյուրների կրճատում
Հեղեղատարների և անձրևաջրերի հեռացման համակարգի ստեղծում
Ջրային ռեսուրսների կանոնավոր մոնիթորինգ (ներառյալ հանքային ջրերը)
Ջրային ռեսուրսների համակարգված օգտագործում
Ոռոգման համակարգի բարելավում
Վերականգնված և կառուցված ջրահեռացման համակարգ
Բնապահպանական նորմերին համահունչ հանքարդյունաբերության զարգացում
Էկոլոգիական թողքերի համապատասխանացում միջազգային նորմերին
Բնապահպանական տեսչության կողմից հսկողության ուժեղացում
Շինարարական աղբի կառավարում
Օրենսդրական դաշտի բարելավում
Ֆինանսական միջոցների հասանելիություն
Բնապահպանական կրթության և դաստիարակության անհրաժեշտ մակարդակ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1. Ընդլայնված կանաչ տարածքներ և բարեկարգ քաղաք						
Մարտավարական նպատակ	Խնդիր	Գործողություն	Պատասխանատու	Ժամկետ	Արժեքը դրամով	Ինդիկատորներ
1	2	3	4	5	6	7
1.1.Ոռոգման համակարգի բարելավում	1.1.1.Ջերմուկի ձախափնյա թաղամասում 10 հա հողատարածքի ոռոգման համակարգի կառուցում	Նախագծահաշվարկային աշխատանքներ	Համայնքապետարան, Ավագանի, Մրցույթով անցած շինարարական կազմակերպություն Դրամաշնորհի տրամադրող կազմակերպություն	6 ամիս	1 200 000	
		Մրցույթի անցկացում			200 000	
		Խողովակաշարի ձեռքբերում /2000գծամետր/			2 000 000	
		Աշխատանքների իրականացում			1.623 000	
	1.1.2.Ոռոգման համակարգի հիմնանորոգում	Ոռոգման համակարգի մոնիթորինգ			200 000	
		Նախագծահաշվարկային աշխատանքներ			1 200 000	
		Մրցույթի անցկացում			200 000	
		Աշխատանքների իրականացում			400 000	
1.2.Կանաչ տարածքների ընդարձակում	1.2.1. Պետական տնկարանի հիմնում 500 մ² տարածքում	Նախագծահաշվարկային աշխատանքներ	Համայնքապետարան, Ավագանի, Մրցույթով անցած շինարարական կազմակերպություն, Դրամաշնորհի տրամադրող կազմակերպություն		1 200 000	
		Մրցույթի կազմակերպում			200 000	
		Տարածքի ձեռքբերում			Պետական հողերից անվճար տրամադրում	

		400 գծամետր ոռոգման համակարգի անցկացում			400 000	
		Աշխատանքների իրականացում			325 000	
	1.2.2..Տարածքների կանաչապատում	Դենդրոլոգ մասնագետների կողմից կանաչապատ տարածքների հաշվառում, նախագծում	Համայնքապետարան, Ճարտարապետ, Մրցույթով անցած կազմակերպություն, Դրամաշնորհ տրամադրող կազմակերպություն,		1 500 000	
		3 հա սիզամարգերի ստեղծում			400 000	
		Քաղաքային այգու 5 հա տարածքում թփերի և տնկիների համալրում			500 000	
		Եկեղեցու շրջապատի կանաչապատում 1 հա	Եկեղեցու աշխատակազմ		30 000 000	
		Այգիների և պուրակների հիմնում				
		Մայթերի կանաչապատում			500 000	
		Դպրոցամերձ տարածքներում գեղազարդ թփերի տնկում	Դպրոցի աշխատակազմ, Դրամաշնորհ տրամադրող կազմակերպություն		1 000 000	

1.3.Կանաչապատման գործընթացում հասարակության լայն խավերի ներգրավում	1.3.1.Բնապահպանական տեղեկատվություն	Քարոզարշավ քաղաքի բնակիչների շրջանում	Զանգվածային լրատվամիջոցներ, Հասարակական կազմակերպություններ		500 000	
		Հեռուստահաղորդում ների տեղական զանգվածային լրատվամիջոցների օգնությամբ			1 000 000	
		Տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում			500 000	
	1.3.2.Բնապահպանական կրթություն	Ուսուցողական դասընթացներ դպրոցներում	Դպրոց, Հասարակական կազմակերպություններ		960 000	
	1.3.3. Բնապահպանական վարքագծի ձևավորում	Տնկիների ձեռքբերում	Դպրոց, Հասարակական կազմակերպություն Դրամաշնորհ տրամադրող կազմակերպություն ներ		1 տնկին 1000դրամ	
		Ծառատունկի կազմակերպում			1 փոսը 200 դրամ	
	1.3.3. Հակահրդեհային միջոցառումների իրականացում	Հիդրանտների ստեղծում	Համայնքապետարան, Արտակարգ իրավիճակների փրկարարական ծառայություն			
		Վթարային հակահրդեհային ավազանի հիմնանորոգում				
		Հակահրդեհային միջոցառումների կազմակերպում				

1.4. Քաղաքի բարեկարգում	1.4.1.Ձախափնյա թաղամասում ջրավազանի կամ լողավազանի ստեղծում	Նախագծահաշվարկային աշխատանքներ	Համայնքապետարան, Ճարտարապետ, Մրցույթով անցած կազմակերպություն, Դրամաշնորհ տրամադրող կազմակերպություն		1 200 000	
		Մրցույթի կազմակերպում			200 000	
		Տարածքի ձեռքբերում			Անվճար	
		Լողավազանի կառուցում				
	1.4.2.Ձախափնյա թաղամասում զբոսայգու ստեղծում	Նախագծահաշվարկային աշխատանքներ	Համայնքապետարան, Ճարտարապետ, Մրցույթով անցած կազմակերպություն, Դրամաշնորհ տրամադրող կազմակերպություն		1 200 000	
		Մրցույթի կազմակերպում			200 000	
		Տարածքի ձեռքբերում			Անվճար	
		Զբոսայգու ստեղծում			30 000 000	
1.5.Քաղաքապետարանում գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի ստեղծում			Մարզպետարան, Համայնքապետարան			

Ռազմավարական նպատակ 2. Թափոնների արդյունավետ կառավարում						
Մարտավարա-կան նպատակը	Խնդիրը	Գործողությունը	Պատասխանատուն	Ժամկետը	Արժեքը	Ինդիկատորները
1	2	3	4	5	6	7
2.1. Աղբավայրերի համապատասխանեցում պահանջվող նորմերին	2.1.1 Շինարարական թափոնների աղբավայրի ստեղծում	Տարածքի ընտրություն	Համայնքապետարան, Ճարտարապետ	2016		Համապատասխան տարածքի առկայություն
		Ֆինանսական միջոցների հայթայթում	Համայնքապետարան	2017		Առկա ֆինանսական միջոցներ
		Տարածքի նախապատրաստում	Համայնքապետարան, Ճարտարապետ, Մրցույթով անցած կազմակերպություն	2017		Անհրաժեշտ փաստաթղթերի առկայություն
		Աղբավայրի նախագծում	Համայնքապետարան, Ճարտարապետ, Մրցույթով անցած կազմակերպություն	2017		Նախագծի առկայություն
		Շինարարական աշխատանքների կազմակերպում	Համայնքապետարան, Մրցույթով անցած կազմակերպություն	2018		Նոր աղբավայրի առկայություն
	2.1.2.Հին աղբավայրի գործունեության կարգավորում	Հին աղբավայրի ռեկուլտիվացիա	Համայնքապետարան, Մրցույթով անցած կազմակերպություն	2017		Վնասազերծված աղբավայր
	2.1.3.Աղբահանության արդյունավետ	Առանձնացված աղբահանության	Համայնքապետարան, Մրցույթով անցած	2017		Առանձնացված աղբահանության

	կազմակերպում	համար նոր մեքենաների ձեռքբերում	կազմակերպություն			նոր մեքենաների առկայություն
		Առանձնացված աղբահանության համար նոր աղբամանների ձեռքբերում,	Համայնքապետարան, Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Նոր աղբամանների առկայություն
		Կրծողների դեմ քաղաքի մակարդակով պայքարի միջոցառումների անցկացում	Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Միջոցառման արդյունավետությունը
		աղբարկղերի ախտահանում ամիսը մեկ անգամ	Մրցույթով անցած կազմակերպություն	2015		Աղտահանված աղբարկղերի քանակը
		Աղբատարների ստացիոնար ախտահանման կետի ստեղծում աղբավայրի հարևանությամբ	Համայնքապետարան	2017		Աղբատարների ստացիոնար ախտահանման կետի առկայություն
2.2.Կոշտ թափոնների երկրորդային օգտագործում	2.2.1.Աղբի վերամշակման գործարանի ստեղծում	Ֆինանսական միջոցների հայթայթում	Համայնքապետարան	2016		Ֆինանսական միջոցների առկայություն
		Նախագծահաշվարկ ային աշխատանքներ	Համայնքապետարան, Ճարտարապետ, Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Նախնական հաշվարկների առկայություն

		Մրցույթի անցկացում	Համայնքապետարան	2016		Հաղթող կազմակերպության հետ պայմանագրի առկայություն
		Տարածքի ընտրություն	Համայնքապետարան, Ճարտարապետ	2015		Ընտրված տարածք
		Տարածքի նախապատրաստում	Մրցույթով անցած կազմակերպություն	2015		Կատարված նախապատրաստական աշխատանքներ
		Գործարանի նախագծում	Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Նախագծի առկայություն
		Սարքավորումների ձեռքբերում	Մրցույթով անցած կազմակերպություն	2017		Սարքավորումների առկայություն
		Շինարարական աշխատանքների կազմակերպում	Մրցույթով անցած կազմակերպություն	2018		Աղբի վերամշակման գործարանի առկայություն
2.3.Կոշտ թափոնների վնասազերծում	2.3.1.Սպանդանոցի կառուցում	Ֆինանսական միջոցների հայթայթում	Համայնքապետարան	2015		Ֆինանսական միջոցների առկայություն
		Նախագծահաշվարկային աշխատանքներ	Համայնքապետարան, Ճարտարապետ, Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Նախնական հաշվարկների առկայություն
		Մրցույթի անցկացում	Համայնքապետարան	2016		Հաղթող կազմակերպության հետ պայմանագրի առկայություն

		Տարածքի ընտրություն	Համայնքապետարան, Ճարտարապետ	2015		Ընտրված տարածք
		Շինարարական աշխատանքների կազմակերպում	Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Սպանդանոցի առկայություն
	2.3.2.Սեպտիկ հորի կառուցում	Ֆինանսական միջոցների հայթայթում	Համայնքապետարան	2015		Ֆինանսական միջոցների առկայություն
		Նախագծահաշվարկային աշխատանքներ	Համայնքապետարան, Ճարտարապետ, Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Նախնական հաշվարկների առկայություն
		Մրցույթի անցկացում	Համայնքապետարան	2016		Հաղթող կազմակերպության հետ պայմանագրի առկայություն
		Տարածքի ընտրություն	Համայնքապետարան, Ճարտարապետ	2015		Ընտրված տարածք
		Շինարարական աշխատանքների կազմակերպում	Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Սեպտիկ հորի առկայություն

Ռազմավարական նպատակ 3. Բարելավված մակերևութային հոսքեր						
Մարտավարական նպատակը	**Խնդիրը**	**Գործողությունը**	**Պատասխանատուն**	**Ժամկետը**	**Արժեքը**	**Ինդիկատորները**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**
3.1.Ջրային ռեսուրսների հասարակական մոնիթորինգ	Դպրոցականների շրջանում ջրի որակի էքսպրես մեթոդների ուսուցանում	Մեթոդական ձեռնարկների ստեղծում	Բնապահպանական ՀԿ-ներ Դրամաշնորհ տրամադրող կազմակերպություններ	2015		Դպրոցներում ձեռնարկների առկայություն
		Դպրոցներում դասընթացների կազմակերպում	Բնապահպանական ՀԿ-ներ Դրամաշնորհ տրամադրող կազմակերպություններ	2016		Դասընթացի մասնակից աշակերտների քանակը
		Ջրի որակի որոշման դպրոցական լաբորատորիայի ստեղծում	Բնապահպանական ՀԿ-ներ Դրամաշնորհ տրամադրող կազմակերպություններ	2017		Ջրի որակի գնահատման լաբորատորիայի առկայություն
3.2.Ջրահեռացման համակարգի բարելավում	**Ջրահեռացման համակարգի հիմնանորոգում**	Նախագծահաշվարկային աշխատանքներ	Համայնքապետարան, Կոմունալ բաժին, Մրցույթով անցած կազմակերպություն	2015		Նախնական հաշվարկների առկայություն
		Մրցույթի անցկացում	Համայնքապետարան	2015		Հաղթող կազմակերպության հետ պայմանագրի առկայություն
		Նյութերի սարքավորումների ձեռքբերում	Համայնքապետարան, Կոմունալ բաժին, Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Ձեռք բերված նյութեր և սարքավորումներ
		Վերանորոգման աշխատանքների կազմակերպում	Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Վերանորոգված համակարգի չափերը

	Քաղաքի ծայրամասերում նոր համակարգի կառուցում	Նախագծահաշվարկային աշխատանքներ	Համայնքապետարան, Կոմունալ բաժին, Մրցույթով անցած կազմակերպություն	2015		Նախնական հաշվարկների առկայություն
		Մրցույթի անցկացում	Համայնքապետարան	2015		Հաղթող կազմակերպության հետ պայմանագրի առկայություն
		Նյութերի սարքավորումների ձեռք բերում	Համայնքապետարան, Կոմունալ բաժին, Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Ձեռք բերված նյութեր և սարքավորումներ
		Շինարարական աշխատանքների կազմակերպում	Մրցույթով անցած կազմակերպություն	2016		Կառուցված համակարգի չափերը
3.5.Փոքր ՀԷԿ-երի ջրառի նորմերի հսկողություն	Բնապահպանական հասարակական գործունեության ակտիվացում	Հասարակական հսկողության իրականացում	Բնապահպանական ՀԿ-ներ, Համայնքապետարան	2015		Շրջայցերի քանակը և մասնակիցների թիվը
		Բնապահպանական նախարարության հետ համատեղ շրջայցերի կազմակերպում	Բնապահպանական ՀԿ-ներ, Համայնքապետարան	2015		Բացահայտված խախտումների քանակը
3.6. Աղտոտման աղբյուրների բացահայտում և պայքար դրանց դեմ	Բնապահպանական հասարակական գործունեության ակտիվացում	«Կանաչ պարեկներ» հասարակական բնապահպանական ջոկատների ստեղծում	Բնապահպանական ՀԿ-ներ, Համայնքապետարան	2015		Ստեղծված ջոկատների թիվը
		Շրջայցերի կազմակերպում	Բնապահպանական ՀԿ-ներ, Համայնքապետարան	2015		Բացահայտված աղտոտված աղբյուրները

Ջերմուկ քաղաքի «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների պլանի կազմման» քաղաքային խորհրդի կազմ

1. Սամվել Մարգարյան /Ջերմուկ քաղաքային համայնքի փոխքաղաքապետ/
2. Արսեն Գառնիկյան / Ջերմուկի քաղաքապետարանի գլխավոր մասնագետ/
3. Այրուծ Համբարձումյան / Ջերմուկի քաղաքապետարանի առաջատար մասնագետ/
4. Ազատ Հովակիմյան /ավագանի/
5. Էդվարդ Հովհաննիսյան /Գազպրոմ Արմենիա ՓԲԸ Ջերմուկի մ/ճ տնօրենի տեղակալ/
6. Ռոման Դանիելյան /ՀՀ ԱԻՆ Ջերմուկի հրշեջփրկարարական ջոկատի հրամանատար/
7. Արմեն Գրիգորյան /Ջերմուկի զբաղվածության կենտրոնի տնօրեն/
8. Միհրան Ստեփանյան /Օդ կայանի տնօրեն/
9. Իրինա Ալեքսանդրիդի /Հ. Վ.Կ. Ազգային կենտրոնի Ջերմուկի մասնաճյուղի փոխտնօրեն/
10. Նունե Մկրտչյան /Հ. Վ.Կ. Ազգային կենտրոն Ջերմուկի մասնաճյուղի քիմիկ- լաբորանտ/
11. Մանուկյան Գագիկ /<<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ /
12. Արմեն Թադևոսյան /Ջերմուկի ճոպանուղու տնօրեն/
13. Արմինե Սիմոնյան /<<Ջերմուկ գրուպ>> -արտաքին առևտրի գծով փոխտնօրեն /
14. Արևիկ Համբարձումյան /<<Արմենիա >>առողջարանի ադմինիստրատոր/
15. Մանուշակ Սարգսյան /<<Արմենիա>> առողջարան/
16. Պավլիկ Հարությունյան /Բիգ-հոլդինգ/
17. Արամ Հակոբյան /<<Արևաձուկ>> ՍՊԸ փոխտնօրեն/
18. Էրիկ Ստեփանյան /<<Գեոթիմ>> ՓԲԸ առողջության և անվտանգության փորձագետ/
19. Արթուր Հովսեփյան /<<Գեոթիմ>> ՓԲԸ երկրաբան/
20. Լաուրա Բաղդասարյան /Մաքսիմ Գորկու անվան հիմնական դպրոցի տնօրեն/
21. Աննա Բաղդասարյան / Մաքսիմ Գորկու անվան հիմնական դպրոցի ուսուցչուհի/
22. Գոհար Ղազարյան /Ջերմուկի ավագ դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի/
23. Համեստ Արսենյան /Ջերմուկի ավագ դպրոցի լաբորատորիայի վարիչ/
24. Երջանիկ Թադևոսյան /Կարեն Ասրյանի անվան շախմատի դպրոցի տնօրեն/
25. Խաչիկ Ենոքյան /Ջերմուկի թիվ 2 արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի տնօրեն/
26. Սյուզաննա Ավետիսյան /<<Ջերմուկի երիտասարդական կենտրոն>> ՀՈԱԿ-ի տնօրեն/
27. Վազգեն Գալստյան /Ջերմուկի զարգացման կենտրոն ՀԿ/
28. Նարեկ Միրզոյան /լրագրող, Հ1 , MaxInfo լրատվական կայք/